



Սույն գրքույկը ներկայացնում է ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի «Երկխոսության խթանում հանուն տարածաշրջանային հաշտեցման» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Քաղաքացիական հասարակության դերը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում» խորագրով կլոր սեղան քննարկման ընթացքում հնչած գեկույցներն ու քննարկման նյութերը:

**«Քաղաքացիական հասարակության դերը
հակամարտությունների խաղաղ կարգավորման
գործընթացում» խորագրով կլոր սեղան-
քննարկում**

2014թ. հոկտեմբերի 29-ին ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամում տեղի ունեցավ «Քաղաքացիական հասարակության դերը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում» խորագրով կլոր սեղան-քննարկում:

Քննարկման սկզբում ողջույնի և բացման խոսքով հանդես եկան Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու, Արթիկի թեմի առաջնորդ Ս. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանն ու Կլոր սեղան հիմնադրամի տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը:

Քննարկման երեք նիստերը վարեցին Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տնօրեն, Կլոր սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Ս. Վահրամ քահանա Մելիքյանը, Հակամարտությունների և խաղաղության հետազոտման հայկական ասոցիացիայի նախագահ Խաչիկ Գալստյանը և «Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ Արամ Սաֆարյանը: Քննարկվող նյութի շուրջ զեկուցումներով հանդես եկան «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ նախագահ

Կարեն Բեքարյանը, Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը, «Կովկասի ինստիտուտ» հիմնադրամի փոխտնօրեն Սերգեյ Մինասյանը, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանը, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Լաուրա Բաղդասարյանը և Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ Ստեփան Գրիգորյանը:

Հավարտ քննարկման տեղի ունեցավ նաև մտքերի համակողմանի փոխանակում: Կլոր սեղանն ամփոփվեց Կլոր սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Հովակիմ Եպիսկոպոսի խոսքով:

**Նկատառումներ հայ-ադրբեջանական
երկխոսության շարունակման
հնարավորությունների վերաբերյալ**

*Աշոտ Մելիքյան
Խոսքի ազատության պաշտպանության
կոմիտեի նախագահ*



Վերջին տարիներին գործընկեր ադրբեջանցի փորձագետի հետ բավականին հաճախ հրավիրվում ենք Ղրղզստան, որտեղ դասընթացներ ենք անցկացնում այդ երկրի հարավային մարզերի լրագրողների համար: Հայտնի է, որ այդ հարավային մարզերում տարիներ առաջ արյունալի ազգամիջյան հակամարտություններ էին տեղի ունեցել, և այդ առումով այս այցելություններն ինձ համար և՛ մասնագիտական, և՛ մարդկային առումով բավականին հետաքրքիր են և կարևոր: Նախ՝ հնարավորություն է ընձեռվում ևս մի հակամարտություն ուսումնասիրել և աշխատել

գործընկերների հետ, ովքեր իրենց խնդիրներն են բարձրացնում, քննարկում ենք և փորձում որոշ լուծումներ գտնել:

Մյուս կողմից՝ սա լավ առիթ է, որպեսզի հենց ադրբեջանցի գործընկերոջ հետ բավականին անկեղծ գրուցենք հայ-ադրբեջանական հակամարտությունից, դարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ: Եվ, իսկապես, դա էլ է կարևոր, քանի որ վերջին տարիներին շատ ավելի սակավ են դարձել շփումները, եթե չասենք, որ երկկողմանի շփումները գրեթե զրոյացել են: Միջազգային համաժողովների ձևաչափում այդքան էլ հեշտ չէ խոսել ադրբեջանցի մասնակիցների հետ. նրանք բավականին փակ են, անկեղծ չեն: Շատ քիչ են այն մարդիկ, ում հետ կարող ենք նման թեմաներով խոսել և լուրջ քննարկումներ, փաստարկումներ անել:

Այնպես որ այսպիսի աշխատանքը շատ հետաքրքիր է նաև այն առումով, որ այդ կոնֆլիկտները ուսումնասիրելիս ուզում ես ինչ-որ գուգահեռներ անցկացնել, ինչ-որ համեմատություններ անել: Եվ այդ համեմատությունները ցույց են տալիս, որ այդ համեմատությունը նույնպես կաղում է: Ամեն մի հակամարտություն իր առանձնահատկությունների շարքն ունի, և այս առումով նույնպես պետք է ասեմ, որ տարբերություններն ակնհայտ են: Մեր

ադրբեջանցի գործընկերների հետ այս շփումների ընթացքում ես էլ համոզվում եմ իմ այն կարծիքում, որ Հայաստանը, Ադրբեջանը և Ղարաբաղն երբեք այնքան հեռու չեն եղել խնդրի խաղաղ կարգավորումից, որքան որ այսօր:

Կուզենայի անդրադառնալ մի քանի խնդիրների, որոնց 2000-ականների սկզբին փորձագետներն ավելի հաճախ էին անդրադառնում: Այդ ժամանակ մի եռակողմ հետազոտություն անցկացվեց, և այդ ժամանակ փորձագետներն եկան այն եզրակացության, որ առհասարակ այս կոնֆլիկտը լուծման երեք ուղի ունի: Մասնանշվում էր փոխզիջումային տարբերակը, երբ երկու կողմերը, ավելի շահագրգռված լինելով այդ հակամարտության հանգուցալուծմամբ, իրենք էին գնում փոխզիջումների և ինչ-որ մի հանգրվանի էին հասնում: Երկրորդը՝ դա խաղաղության պարտադրանքի ուղին էր, որի մասին այն ժամանակ շատ հաճախ հիշատակվում էր Դեյթոնյան պայմանագրերում: Ասում էին, որ, իհարկե, միջազգային կազմակերպությունների կամ գերտերությունների ճնշման ներքո միգուցե հնարավոր կլինի այդ խնդիրը լուծել: Մի հետաքրքիր մոտեցում ևս կար, որ իմաստ ունի մի կողմ դնել կոնֆլիկտի բուն էությունը և փորձել համագործակցության այլ ոլորտներ, եզրեր գտնել, և միգուցե տարիների ընթացքում կողմերը, որոշ

համատեղ ծրագրեր իրականացնելով նույն
բնապահպանական, մերձսահմանային
ուլորտներում, հնարավոր է հարաբերությունները
բարելավեն:

Բայց մենք արդեն տարիների բարձունքից
տեսնում ենք, որ այդ բոլոր մոտեցումները
տառապում են ուտոպիայի բավականին մեծ
չափաբաժնով: Փոխզիջումները փաստորեն
անհնարին են կողմերի մաքսիմալիստական
մոտեցումների պատճառով և երեք կողմերն էլ
իրարամերժ, մաքսիմալիստական տեսլական
ունեն այդ խնդրի լուծման առումով:
Խաղաղության պարտադրանքն այսօրվա գլոբալ
փոփոխությունների պարագայում գրեթե անհնար
է և ոչ մեկին էլ այսօր դա պետք չէ, և
գերտերությունները հիմա զբաղված են լրիվ այլ
խնդիրներով, վերափոխումներով:
Համաշխարհային մասշտաբի վերափոխումներ են
տեղի ունենում, և, կարծես, ոչ ոք այդ
պարտադրանքով չի զբաղվելու, և միգուցե
նույնիսկ դա լավ է, որ պարտադրանքներ չկան:
Ինչ վերաբերում է համագործակցության
ծրագրերին, ապա այստեղ նույնպես ակնհայտ
դեգրացիա է նկատվում, և այդ
համագործակցությունը, և՛ պաշտոնական
մակարդակով, և՛ հասարակական
կազմակերպությունների մակարդակով հասել է
նվազագույնի: Ու եթե օրինակ՝ 2001 թվականին

հնարավոր էր Հայաստանի և Ղարաբաղի լրագրողների այցելությունը Բաքու և ադրբեջանցիների բավականին ակտիվ մասնակցությունը Հայաստանում կազմակերպվող միջոցառումներին, ապա հիմա դա արդեն անհնարին է: Վերջին միջոցառումը, որ մեր Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն կազմակերպեց 2009 թվականին, տեղեկատվության ազատության խնդիրներին վերաբերող միջազգային կոնֆերանսն էր: Դա տարածաշրջանային (Հայաստան–Ադրբեջան–Վրաստան) կոնֆերանս էր՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի փորձագետների մասնակցությամբ: Այդ միջոցառումից հետո փաստորեն ոչինչ չէր ստացվում, և դա բնական է, որովհետև հենց Ադրբեջանի ներսում այդ արգելքները շատ ուժեղացվել են: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ այնքան էլ ճիշտ չէր լինի, եթե կողմերը ձեռքերը ծալած նստեին և համարեին, որ այս օբյեկտիվ խնդիրների պատճառով պետք է որևէ քայլ չձեռնարկել և ոչինչ չանել: Կարծում եմ, որ ցանկացած նախաձեռնություն, որը կարող է շփումների ակտիվացմանը բերել, ողջունելի է, որովհետև ինչքան այդ շփումները պակասում են, այդքան ագրեսիան է ավելանում:

Եթե խոսենք ավելի կոնկրետ քայլերից, մեր հետազոտությունների արդյունքում փորձագետները նշում էին, որ

հակամարտությունը կարելի է խաղաղ լուծման ուղիով տանել նախ և առաջ բարենպաստ ինֆորմացիոն միջավայր ստեղծելու պարագայում: Մենք տեսնում ենք, որ դա հնարավոր չէ, և դա նաև պայմանավորված է նրանով, որ քաղաքական էլիտան լուրջ ազդեցություն ունի լրատվամիջոցների վրա, և այստեղից է գալիս հենց այս հոետորաբանությունը: Կարծում եմ, որ մեղավր նաև այլ կողմ ունի: Եթե քաղաքական վերնախավը որոշ պայմանավորվածություններ ձեռք բերի, ապա կհրահանգի լրատվամիջոցներին քայլեր ձեռնարկել ագրեսիան, տեղեկատվական պատերազմը մեղմելու կամ վերացնելու ուղղությամբ: Մինակի խմբի շրջանակներում բանակցությունները գնում են առանց Լեռնային Ղարաբաղի ակտիվ մասնակցության: Այդ ուղղությամբ միշտ արժե մտածել, որ դարաբաղյան կողմը ներգրավվի և՛ քաղաքացիական հասարակության միջոցառումներում, և՛ պաշտոնական բանակցություններում: Բայց նաև պետք է մինիմալ հնարավորություններն օգտագործել հակամարտող կողմերի ներկայացուցիչների շփումների համար, եթե դա իհարկե կառուցողական բնույթ է կրելու և ոչ թե կիսագաղտնի քայլերով ինչ-որ վնաս հասցնելու:

Եթե բանակցությունների ընթացքում հնարավոր լիներ տեղեկատվական պատերազմը մեղմելու շուրջ որևէ պայմանավորվածություն ձեռք բերել, նաև հաշվի առնելով այն հետազոտությունները, որոնք որ իրականացնում են մեր գործընկեր կազմակերպությունները, չգործածել թշնամանք սերմանող բառապաշար, իհարկե վատ չէր լինի: Բայց դա շատ բարդ է լինելու, եթե վերևից այդ հրահանգները չլինեն: Շատ հրատապ է մնում և շատ մարդասիրական մոտեցում կլինի դիպուկահարների հեռացումը շփման գոտուց, շատ մարդասիրական և կարևոր գործոն է ռազմագերիների կամ զոհերի դիերի փոխանակումը:

**Քաղաքացիական հասարակության դերը
հակամարտությունների խաղաղ
կարգավորման գործընթացում.
չվնասելու սկզբունքից մինչև իրական
օժանդակություն**

*Կարեն Բեքարյան
«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ նախագահ,
«Հայացք» կիրառական քաղաքականության և
հետազոտությունների վերլուծական կենտրոնի
փորձագետ*



Թեմային հնարավորինս համապարփակ անդրադառնալու համար անհրաժեշտ է առանձնացնել մի քանի հիմնական ուղղություններ.

1. *Քաղաքացիական հասարակության հնարավոր նպատակները հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում,*

2. Հակամարտության կողմերում ներքաղաքական իրավիճակին հստակ տիրապետում և զգայունություն փոփոխությունների նկատմամբ,
3. «Մի՛ վնասիր» սկզբունքը կամ ի՞նչ չի կարելի,
4. Նշված խնդրի համատեքստում քաղաքացիական հասարակության գործիքները,
5. Ղարաբաղյան հակամարտության համատեքստում իրավիճակի գնահատում, փորձից բխող դիտարկումներ և առաջարկներ:

**1. Քաղաքացիական _____ հասարակության
հնարավոր _____ նպատակները
հակամարտությունների խաղաղ կարգավորման
գործընթացում**

Քաղաքացիական հասարակության նպատակները հակամարտությունների կարգավորման համատեքստում կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերի.

- ա) ազդեցություն առկա իրավիճակի վրա,
- բ) ազդեցություն որոշման կայացման գործընթացի վրա,
- գ) ազդեցություն հետկոնֆլիկտային գործընթացների վրա:

Ազդեցություն առկա իրավիճակի վրա

Առկա իրավիճակի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ հակամարտությունների

կարգավորման համար կարևոր նշանակություն ունի վստահության մթնոլորտը: Վստահության առկայությունը կարող է ապահովել հակամարտության կողմերի ղեկավարների միջև արդյունավետ երկխոսություն՝ անկախ առկա տարաձայնություններից: Վստահության կառուցման տեսանկյունից կարևոր դեր կարող է ունենալ նաև շահերի համընկնումը, կողմերից յուրաքանչյուրի համար կարգավորման գործընթացի կարևորության գիտակցումն ու կառուցողական մոտեցումը:

Դրա հետ մեկտեղ, անկախ կողմերի ղեկավարների միջև վստահության մակարդակից և դրա ամրապնդման նպատակով կիրառվող գործիքներից, հասարակությունների միջև երկխոսության, միջանձնային շփումների բացակայության պարագայում վստահությունը կողմերի միջև լիարժեք լինել չի կարող: Շատ կարևոր է մի կողմից չթերագնահատել, մյուս կողմից՝ չգերագնահատել այդ շփումների կարևորությունն ու դերը:

Կայացած ժողովրդավարությունների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ ժողովրդական դիվանագիտության դերն ու ազդեցությունն էապես մեծ է, քանի որ բավական բարձր է իշխանությունների հաշվետվողականությունը հասարակության առջև: Հանրության ձայնն այս

հասարակություններում լսելի է որոշում կայացնողների համար և ունենում է իր որոշակի ազդեցությունն երկրի քաղաքական գործընթացների վրա:

Երիտասարդ, զարգացող ժողովրդավարությունների պարագայում ժողովրդական դիվանագիտության դերը նույնպես պետք չէ անտեսել, սակայն այն իր նշանակությամբ զիջում է կայացած ժողովրդավարությամբ երկրներին:

Երկու դեպքում էլ, սակայն, հասարակական ընկալումների վրա մեծ ազդեցություն են ունենում հասարակության էմոցիոնալ տրամադրությունները: Առանձին մարդկանց շփումները, մյուս կողմին ճանաչելն ու ձեռք բերված պատկերացումների տարածումը հասարակության մեջ կարող է էական արդյունավետություն ապահովել: Հասկանալի է, որ միայն դա բավարար չէ հակամարտության կարգավորման համար, միննույն ժամանակ, սակայն, հակամարտության երկարաժամկետ, ամբողջական կարգավորումը հնարավոր չէ առանց քաղաքացիական հասարակության ներգրավման:

Քաղաքացիական հասարակության գործունեությունը առկա իրավիճակի ներքո վստահության ֆոնի ընդլայնման հնարավորություն է ստեղծում, ինչն էլ ածանցյալ

իր ազդեցությունն է ունենում առավել լայն իմաստով վստահության ձևավորման վրա:

Ազդեցություն որոշման կայացման գործընթացի վրա

Չկարգավորված հակամարտություն ունեցող ցանկացած հասարակություն կազմված է առավել ռազմատենչ «բազեններից» և խաղաղության կողմնակիցներից: Երիտասարդ ժողովրդավարությամբ երկրներում իշխանությունների համար շատ ավելի բարդ է կայացնել հանրության լայն շերտերի համար ոչ այնքան ընկալելի որոշումներ, հակամարտության կարգավորման հարցում համաձայնվել թոչիչքային առաջընթացի, երբ հասարակությունում էական դեր ունեն «բազենները»: Հետևաբար, պետության երկարաժամկետ շահերով առաջնորդվելու, ոչ պոպուլիստական քայլերի դիմելու համար իշխանությանը հարկավոր է համապատասխան հանրային պահանջարկ, ընկալում: Քաղաքացիական հասարակության գործունեությունը կարող է մեծ նպաստ բերել այդ ֆոնի ապահովմանը:

Միաժամանակ, եթե իշխանությունն ինքն է ինչ-ինչ պատճառներից ելնելով «բազեային» կեցվածք ընդունում, քաղհասարակությունը իր համապատասխան գործունեությամբ հնարավորություն է տալիս հասարակության լայն

շերտերի միջոցով հավասարակշռել իշխանությանը:

Եվ, իհարկե, իշխանությունը մշտապես ունի նոր գաղափարների, մոտեցումների գեներացման անհրաժեշտություն, և այդ հարցում քաղհասարակությունը կարող է իր ներդրումն ունենալ: Հասարակական կազմակերպությունների, վերլուծաբանների հանդիպումների ընթացքում կարող են մշակվել այնպիսի գաղափարներ, մոտեցումներ, որոնք կարող են արժանանալ քաղաքական որոշում ընդունողների ուշադրությանը: Ի վերջո, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն իրենց շփումների մեջ շատ ավելի անկաշկանդ են, ինչը գեներացիայի յուրահատուկ հնարավորություն է ստեղծում:

Ազդեցություն հետկոնֆլիկտային գործընթացների վրա

Ցանկացած հակամարտության կարգավորման հետկոնֆլիկտային փուլ պարունակում է նոր հակամարտության վերաճման վտանգ: Կողմերից մեկի՝ որևէ պայմանավորվածության թեկուզ պատահական խախտում կարող է հանգեցնել «դոմինոյի էֆեկտի»: Այս պարագայում քաղաքացիական հասարակության ինստիտուտները հանդես են գալիս այն էական «կամուրջների» դերում, որոնք

կարողանում են կանխել սրացումներն ու ամրապնդել հետկոնֆլիկտային հաշտությունը՝ մյուս կողմերի հետ համատեղ աշխատանքի փորձի շնորհիվ: Նրանք ստանձնում են այդ իրավիճակում «հրշեջների», վստահություն սերմանողների դերը:

Վերջիվերջո, հետկոնֆլիկտային փուլում նրանք դառնում են առաջին «ծիծեռնակները»՝ ցույց տվող, որ միմյանց հետ շփումն ու ջերմ հարաբերությունները հնարավոր են: Այդ հարցում նրանք հիմնվում են մյուս կողմի հետ գործընկերային իրենց կապերի ու փորձի վրա:

**2. Հակամարտության կողմերում
ներքաղաքական իրավիճակի հստակ
տիրապետում և զգայունություն
փոփոխությունների նկատմամբ**

Պետք է հստակ գիտակցել, որ ներքաղաքական իրավիճակը հակամարտության կողմերում կարող է ինչպես նպաստել հակամարտությունների կարգավորման գործընթացում քաղաքացիական հասարակության դերի զարգացմանը, այնպես էլ դառնալ խանգարող գործոն:

Այս տեսակետից պետք է փաստել, որ դարաբաղյան կարգավորման գործընթացում տարբեր փուլերին ունեցել ենք տարբեր

իրավիճակ: Եթե հիմա փորձենք անդրադառնալ ներկա իրավիճակին, կարելի է ամրագրել հետևյալը. երկխոսությունը հանրությունների մեջ բարդ է կառուցել Ադրբեջանում տիրող իրավիճակի պատճառով: Քաղաքացիական ակտիվիստների, խաղաղաշինության մեջ ներգրավված ՀԿ-ների ներկայացուցիչների, լրատվամիջոցների, բլոգերների նկատմամբ ճնշումներն էապես բարդացնում են գործընթացը: Եվ ավելին, չկան այսօր ազդակներ, որոնց վրա հենվելով կարելի է եզրակացնել, որ այս պարագայում կարելի է ակնկալել իրավիճակի էական փոփոխություններ:

3. «Մի՛ վնասիր» սկզբունքը կամ ի՞նչ չի կարելի

Քաղաքացիական հասարակության դերակատարների կամ ներկայացուցիչների կողմից հակամարտության կարգավորման գործընթացում, այսպես կոչված «ժողովրդական դիվանագիտության» ծրագրերի թե՛ նախագծման, թե՛ հաստատման և թե՛ իրականացման փուլում կարևոր է հաշվի առնել մի քանի սկզբունք.

1. Հնարավորինս պետք է զերծ մնալ սպասարկելուց հակամարտության մյուս կողմի կամ կողմերի շահերը: Նման օրինակները քիչ չեն, և եթե

փորձենք ամփոփ անդրադառնալ առավելապես տարածված խնդիրներից են, երբ, օրինակ՝ հայաստանյան ՀԿ-ները մասնակցում են ծրագրերի, որոշ դեպքերում անգամ նախաձեռնում ծրագրեր, որտեղ դարաբաղյան կողմը չունի որևէ մասնակցություն: Մա անկախ ծրագրի բովանդակությունից, ընթացքից և արդյունքներից ուղղակիորեն ջուր է լցնում ադրբեջանական քարոզչության ջրաղացին, որովհետև որևէ կերպ չի արտացոլում դարաբաղյան մոտեցումը, տեսակետը և մասնակցությունը՝ խախտելով ոչ միայն բարոյական և մարդկային նորմեր, այլ ընդհանրապես, թե՛ բանակցության և թե՛ խաղաղաշինության տրամաբանությունը: Որպես երկրորդ նմանատիպ օրինակ կարելի է դիտարկել այն, երբ որոշակի ծրագրերի նախագծման կամ իրականացման փուլում անհարկի օգտագործվում է «շոկային էֆեկտ» մոտեցումը: Այսինքն, ոչ թե հիմքում դրվում է, որ ծրագիրը պետք է նպաստի, օրինակ, վստահության միջոցների, հակամարտության կողմերի միջև երկխոսության զարգացմանը և այլն, այլ լիովին ընդհակառակը՝ ի հաշիվ «շոկային էֆեկտի» ստեղծի արագ և ծայրահեղ արձագանքներ, ինչն էլ նախաձեռնողները փորձում են հետագայում «վաճառել» դոնորների վրա: Նման օրինակների

շարքը կարելի է շարունակել, բայց սահմանափակվենք այսքանով:

2. Պետք է խուսափել «փակ ծրագիր» գաղափարից, երբ ծրագրվում և իրականացվում են ծրագրեր, որոնք որևէ կերպ դուրս չեն գալիս դեպի հանրություն, այլ իրականացվում են հնարավորինս փակ օրակարգով և ունեն քողարկվող բովանդակություն: Անկախ նրանից, թե ինչ նպատակով են նման ծրագրերն իրականացվում, դրանք իրենց շուրջ ստեղծում են անհարկի գաղտնիության ֆոն, որն էլ հանրության ընկալումների մեջ հակառակ ազդեցություն է ունենում՝ առաջ բերելով սկզբունքային հարցադրում. «Ի՞նչ ունեք թաքցնելու...»: Հետևաբար, այս պարագայում անվստահություն է առաջանում խաղաղաշինական գործունեության հանդեպ ընդհանրապես: Ուստի ծրագրերի թափանցիկությունն ունի էական նշանակություն:
3. Պետք է զերծ մնալ նախագծելուց և իրականացնելուց ծրագրեր, որոնք ոչ մի կապ չունեն իրականության հետ, այլ խնդրի իրական համատեքստից դուրս բերած, իրականության հետ որևէ կապ չունեցող բաղադրիչի վրա են հիմնված և լավագույն դեպքում ծիծաղ են առաջացնում:

Շարքը կարելի է շարունակել, բայց սահմանափակվենք այսքանով:

Փորձը ցույց է տալիս, որ վերը նշված սկզբունքների հաշվի չառնելը վնասում է ոչ միայն

կոնկրետ դոնորի նախագծած ծրագրի արդյունավետությանը, այլև խաղաղաշինության գործընթացին ընդհանրապես:

4. Նշված խնդրի համատեքստում քաղաքացիական հասարակության գործիքները

Հակամարտությունների կարգավորման գործընթացում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից օգտագործվող գործիքները կարելի է դասակարգել մի քանի խմբերի, որոնցից նշենք հիմնականները.

- **առաջինը՝** վերլուծական այն ծրագրերն են, որոնց թիրախը կամ նպատակադրումը նոր գաղափարների մշակմամբ հակամարտության կողմերի իշխանություններին օժանդակելն է:

- **երկրորդ՝** ՀԿ-ների՝ տարբեր ոլորտներում իրականացվող համատեղ ծրագրերն են: Այդ ծրագրերը միտում ունեն ուղղակի կամ անուղղակի ձևով ազդել հանրությունների վրա՝ փորձելով մեծացնել վստահությունը և լայն տարածում ապահովել հանրություններում:

- **երրորդ՝** ծրագրեր, որոնք նպաստում են «համատեքստի ընդլայնմանը»: Հակամարտության որոշակի ասպեկտներ ավելի լայն համատեքստում դիտարկելը մասնակիցների մոտ ձևավորում է ընկալում, որ իրենց կոնֆլիկտն ամենաձանրը չէ: Այլ հակամարտությունների

կարգավորման օրինակները հուշում են, որ իրենց հակամարտությունը նույնպես կարող է կարգավորվել: Օրինակ կարող է ծառայել այլ կոնֆլիկտների համատեղ ուսումնասիրությունը դարաբաղյան հակամարտության կողմերի փորձագետների կողմից:

5. *Ղարաբաղյան հակամարտության համատեքստում իրավիճակի գնահատում, փորձից բխող դիտարկումներ և առաջարկներ*

Իրավիճակը կարելի է գնահատել միջին արդյունավետության: Նման գնահատականը պայմանավորված է հետևյալով. մի կողմից կան քաղաքացիական հասարակության ինստիտուտներ, որոնց ներկայացուցիչները բավական ակտիվ աշխատում են խաղաղաշինության, հակամարտության տրանսֆորմացիայի և այլ դաշտերում ծրագրերի թե՛ նախագծման և թե՛ իրականացման փուլերում: Այս տեսակետից, տարիների ընթացքում նրանց ակտիվ գործունեությունը կարելի է որոշակիորեն արդյունավետ համարել: Սակայն, հաշվի առնելով Ադրբեյջանում ներկա ներքաղաքական իրավիճակը և դրանից բխող ռիսկերը, կարելի է փաստել, որ այդ արդյունավետությունն իր մեջ ունի և՛ ռիսկային գործոն, և՛ ենթակա է

սահմանափակումների, ինչի ականատեսն ենք այսօր:

Մյուս կողմից, ասել, որ հաջողվել է հակամարտության կողմերի հանրություններում հասնել այնպիսի փոփոխության, որը կբերեր խաղաղության կողմնակիցների հաղթանակի «բազենների» նկատմամբ, երևի կլինի շատ սխալ և ոչ իրատեսական: Հետևաբար, այս չափորոշիչով նույնպես իրավիճակը կարելի է գնահատել միջին արդյունավետության:

Երրորդ՝ կա խնդիր նաև որոշակի դոնորների հետ, որոնք չունեն ցանկություն այսպես կոչված ստեղծագործական կամ նորարարական ծրագրերի ֆինանսավորման: Նման դոնորները հիմնականում առավելապես սահմանափակվում են հայտնի ձևաչափերով՝ սեմինարներ, կոնֆերանսներ և այլն, որոնք էլ այս տարիների ընթացքում մասամբ իրենց սպառել են թե՛ քանակի և թե՛ արդյունավետության պակասի առումով, մասամբ էլ վեր են ածվում ակումբային ձևաչափի և ներառում են հանրության նեղ շրջանակ, որն էլ անվստահության մթնոլորտ է ստեղծում և վերածվում «փակ ծրագրի»:

Կարևոր է խաղաղաշինական ծրագրերում նպաստել ՋԼՄ-ների ներգրավմանը: Մեղիա դաշտի միջոցով զգալիորեն ընդլայնվում են հանրության վրա ազդեցության հնարավորությունները:

Երկրորդ՝ հարկ է ապահովել գործընթացում ներգրավվող հանրության շերտերի, դերակատարների բազմազանությունը:

Հաշվի առնելով Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային անցյալը և շփումները, այդ թվում՝ այսօր տարածաշրջանից դուրս երկու ժողովուրդների խաղաղ գործակցության օրինակները, կարևոր է երկու ժողովուրդների հարաբերությունների դրական օրինակների վերհանումն ու ներկայացումը հանրություններին: Կարևոր է այսօր ևս խաղաղ դրացիության հնարավոր եզրերի շեշտադրումը: Այս համատեքստում կարող է արդյունավետ կերպով օգտագործվել նաև սփյուռքերի ներուժը:

Չնայած անցած ճանապարհին և «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» բանաձևին՝ հարկ է փաստել, որ քաղաքացիական հասարակության ողջ ներուժը մեր հակամարտության պարագայում դեռ օգտագործված չէ: Կարևոր է նաև, որ գործընթացում քաղաքացիական հասարակության ինստիտուտների և հակամարտության կարգավորման միջնորդների միջև լինի հաղորդակցություն:

Ամփոփելով՝ կարելի է ամրագրել, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից նախագծվող, առաջարկվող և իրականացվող ծրագրերը այսպես, թե այնպես պետք է միտված լինեն

հակամարտության կողմերի հանրությունների միջև վստահության մթնոլորտի կայացմանը և զարգացմանը: Այս տեսակետից կարևորվում է երկու խմբի (տիպաբանության) ծրագիր-նախագծերի նախաձեռնումը:

Առաջին խումբ՝ ծրագրեր, որոնք պետք է միտված լինեն առկա բացասական գործոնների չեզոքացմանը (օրինակ՝ հանրային նախաձեռնություններ՝ առնչվող դիպուկահարների հետ քաշմանը, շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմների ստեղծմանը և կայացմանը, կողմերի բարձրաստիճան պաշտոնյաների ելույթների, հայտարարությունների, հակամարտության կողմերի լրատվամիջոցների մշտադիտարկմանը՝ վեր հանելով դրանցում առկա մարդատյացության, ատելության և բռնության դրսևորումները: Մշտադիտարկման արդյունքները կարող են հետագայում հղվել միջազգային համապատասխան կազմակերպություններ, օրինակ՝ ԵԽ՝ կոչ անելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված այդ դրսևորումների նվազեցմանը):

Երկրորդ խումբ՝ ծրագրեր, որոնք պետք է միտված լինեն հակամարտության կողմերի հանրությունների, դրանց տարբեր սեզմենտների շփումների ակտիվացմանը (այդ թվում՝ տարբեր մասնագիտական խմբերի), միմյանց առնչվող

դրական հիշողությունների վեր հանմանը, տարածմանը, դրական նոր նախադեպերի՝ ստեղծմանը և այս ամենի լայն տարածմանը՝ օգտագործելով նաև մեդիա ռեսուրսներ:

Բոլոր ջանքերով պետք է ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական հասարակության ինստիտուտների ակտիվ ներգրավումը գործընթացներին՝ ապահովելով վերը շարադրված առաջին և երկրորդ ծրագրերի զուգահեռաբար նախաձեռնումը և իրականացումը:

**Հանրային դիվանագիտությունը Ղարաբաղյան
հակամարտությունում.**

ինչու՞ է այն կարևոր նոր պայմաններում

*Մերգեյ Մինասյան, քաղ. գիտ. դոկտոր,
«Կովկասի ինստիտուտ» հիմնադրամի
փոխտնօրեն*



Հանրային դիվանագիտության հիմնահարցը, որպես ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործոն, տարեցտարի դառնում է ավելի արդիական, քանի որ հակամարտության երկարամյա չկարգավորվածությունը, հակամարտող կողմերի էլիտաների ու հասարակությունների միջև շփման խողովակների բացակայությունն էլ ավելի հրատապ է դարձնում նման հարաբերությունների հաստատումը: Այս գործոնն էլ ավելի է կարևորվում նաև վերջին ժամանակներս Ադրբեջանի քաղաքացիական հասարակության նկատմամբ տեղի իշխանությունների ճնշումների

հաճախակիացման ֆոնին, որոնք ակնհայտ աճի միտում ունեն:

Ինչպես հայտնի է, 2014թ. մայիսի 12-ին լրացավ հրադադարի հաստատման քսան տարին, ինչը հնարավոր դարձավ ՌԴ միջնորդական ջանքերի շնորհիվ: Այդ փաստաթղթի տակ իրենց ստորագրությունները դրեցին հակամարտության բոլոր կողմերը՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի պաշտպանության նախարարները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության բանակի հրամանատարը: Արդեն շուրջ քսան տարի է, ինչ պահպանվում է այդ փխրուն խաղաղությունը, շարունակվում են բանակցություններն առանց էական առաջընթացի:

Այն իրավիճակը, որն ավելի քան քսան տարի հաստատվել է դարաբաղյան հակամարտության գոտում, կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Վերջին տարիներին Ադրբեջանը արագացրել է սպառազինությունների մրցավազքի տեմպերը, մեծ մասշտաբներով ձեռք է բերում հարձակողական զինատեսակներ: Հայաստանը, իր հերթին, ի գորու է տարբեր ճանապարհներով (այդ թվում և ՀԱՊԿ ու ՌԴ հետ ռազմավարական գործընկերության շրջանակներում) պահպանել ռազմատեխնիկական հավասարակշռությունը շփման գծում, որն էլ հանդիսանում է հրադադարի

փխրուն ռեժիմի պահպանման հիմնական գործոններից մեկը: Հրադադարի ռեժիմի ու ստատուս քվոյի պահպանման մյուս կարևոր գործոնը միջազգային մեխանիզմների առկայությունն է, հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ներգրավվածությունը տարածաշրջանային անվտանգության հիմնահարցերին: Այս առումով ԵԱՀԿ Մինսկի խմբի առանձնահատկությունն այն է, որ համանախագահ երկրները, միջազգային ու տարածաշրջանային շատ հարցերի վերաբերյալ ունենալով իրարամերժ տեսակետներ, համակարծիք են դարաբաղյան հակամարտության կարգավորման ու հատկապես զինված գործողությունների վերսկսման հարցերում: 2008թ. ռուս-վրացական հակամարտության ու 2013-2014թթ. Ուկրաինայի շուրջ ծավալված իրադարձությունների շուրջ Ռուսաստանի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի ունեցած տարածայնությունները, այնուամենայնիվ, չքանդեցին Մինսկի խմբի ձևաչափը, որն այսօր այն բացառիկ հարթակներից է, որտեղ շարունակվում են Մոսկվայի ու Արևմուտքի փոխադարձ շփումները համաշխարհային քաղաքականության արդիական հարցերի վերաբերյալ:

Բիարկե լինում են դեպքեր, որ բացի համատեղ հայտարարություններից միջնորդները

հանդես են գալիս նաև միակողմանի գործողություններով, ինչպես օրինակ 2014թ. մայիսին ամերիկյան համանախագահ Ջ. Ուորլիքն արեց: Ելույթ ունենալով Կարնեգիի վաշինգտոնյան կենտրոնում՝ նա ներկայացրեց հակամարտության կարգավորման սեփական տեսլականը, որը, բնականաբար, ավելի շուտ ներկայացնում էր ամերիկյան վարչակարգի պաշտոնական տեսակետը: Ջ. Ուորլիքի միակողմանի հայտարարությունը պայմանավորված էր հրադադարի հաստատման քսանամյակի, ինչպես նաև ռուս-ամերիկյան հարաբերությունների վատթարացման հանգամանքներով: Իսկ 2014թ. մայիսի 11-ին համանախագահների նոր եռակողմ հայտարարությունը, ըստ էության, կրկնում էր Մադրիդյան սկզբունքների շրջանակներում մշակված մոտեցումները, ինչը ևս մեկ անգամ հավաստեց, որ այս քսան տարիների ընթացքում ոչինչ չի փոխվել ո՛չ ձևաչափի, ո՛չ էլ հակամարտության հիմնական պարամետրերի առումով: Սա, իր հերթին, ենթադրում է, որ բացի ստատուս քվոյի պահպանումից, ուրիշ նոր բան ոչ ոք չի կարող այս պահին առաջարկել խնդրի կարգավորման համատեքստում: Հայկական և ադրբեջանական կողմերը ամեն դեպքում պետք է ընտրեն ստատուս քվոյի պահպանումը՝ մինչև հակամարտության վերջնական կարգավորումը:

Իսկ վերջնական խաղաղությունը հնարավոր չէ, քանի դեռ հակամարտող կողմերի մոտ բացակայում է հակամարտության կարգավորման ընդհանուր տեսլական, որը, իր հերթին, հնարավոր չէ առանց քաղաքացիական հասարակության ինստիտուտների, փորձագետների ու լրագրողների միջև մշտական շփումների, այսինքն՝ առանց հանրային դիվանագիտության:

Սակայն հանրային դիվանագիտության խողովակների լիարժեք իրագործումը դժվարանում է այն հանգամանքով, որ, օրինակ՝ Ադրբեջանում այն մարդիկ, ովքեր ներգրավված էին այս կամ այն կերպ այդ երկխոսության գործընթացներում, ենթարկվում են հետապնդումների ու գտնվում են ադրբեջանական իշխանությունների ուժեղ ճնշումների ներքո: Բացի այդ, տարածաշրջանում նկատվող աշխարհաքաղաքական դիմակայությունն ու նոր վերադասավորումները թույլ են տալիս որոշ երկրների իշխանությունների օգտվել հարմար առիթից և ավելի խիստ գործողությունների դիմել իրենց քաղաքական ընդդիմախոսների ու անկախության փորձեր ձեռնարկող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ, ինչի ականատեսն ենք Ադրբեջանում: Ուկրաինական ճգնաժամի խորացմանը զուգահեռ

ադրբեջանական իշխանությունները գնացին Կենտրոնական Ասիայի ճանապարհով՝ ավելի կենտրոնացնելով ավտորիտար կառավարման համակարգը: Ավտորիտարիզմին նպաստում է նաև Ադրբեջանի տնտեսության կազմվածքը, որի շահույթի 90%-ը գալիս է նավթից ստացված ուղղակի կամ անուղղակի եկամուտներից:

Այսպիսով՝ արդեն 2014թ. ապրիլից սկսած Ադրբեջանում սկիզբ առան առանց այն էլ փոքրաթիվ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հալածանքներն ու հետապնդումները, որի թիրախում հայտնվեցին այն մարդիկ, որոնք այս տարիների ընթացքում ներգրավված են եղել հայ-ադրբեջանական երկխոսության ու փոխզիջումների փնտրման գործընթացում: Արդյունքում ամենաբարձր քաղաքական ղեկավարության մակարդակով կայացրած որոշումներով արդեն ձերբակալվել կամ էլ խիստ ճնշումների տակ են հայտնվել մի շարք այդպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք են՝ Թուրքիայից Ադրբեջան արտահանված Ռ. Միրկադիրովը, Արիֆ ու Լեյլա Յունուսները և այլոք: Այդ գործողությունները իրականացվում էին ամերիկյան համանախագահի հայտնի նախաձեռնությունների ֆոնին, իսկ Ջ. Ուորլիքի կոչը՝ ակտիվացնել հանրային դիվանագիտության մակարդակով շփումները, նախնառաջ, հասցեագրված էր Ադրբեջանի

ղեկավարությանը, որը, օգտվելով ռուսամերիկյան հարաբերությունների լարվածությունից, փորձեց լուծել իր ներքաղաքական հարցերն ու ձերբագատվել մի շարք անցանկալի հասարակական-քաղաքական գործիչներից: Ոչ կառավարական սեկտորի նկատմամբ Ի. Ալիևի վարած նման կոշտ քաղաքականությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ աշխարհաքաղաքական մանևրի հնարավորություն ստանալով Ռուսաստանի ու Արևմուտքի միջև՝ ադրբեջանական ղեկավարությունը որոշակիորեն գործեց անպատժելիության մթնոլորտում, կամ էլ առնվազն խոշոր ուժային կենտրոնների լռելյայն համաձայնության պարագայում: Իհարկե, որոշ թույլ արձագանքներ, քննադատական ելույթներ հնչում են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի կողմից: Օրինակ, Ֆրանսիայի նախագահ Ֆ. Օլանդը, տարածաշրջանային այցով հյուրընկալվելով Բաքվում, պնդեց Լեյլա Յունուսի հետ հանդիպման հարցում: Իսկ արդեն Հայաստանում իր պետական այցի շրջանակներում Ֆ. Օլանդը ևս մեկ անգամ կոչ արեց փոխադարձ շփումներ հաստատել հակամարտող կողմերի հասարակությունների միջև:

ԱՄՆ պետդեպարտամենտը նույնպես 2014թ. մայիսին հանդես եկավ Բաքվին ուղղված քննադատությամբ, իսկ Ադրբեջանում ԱՄՆ

դեսպան Ռիչարդ Մորնինգսթարն ադրբեջանական իշխանություններին ուղղված թաքնված սպառնալիքներ ուղղեց՝ խոսելով Բաքվում նոր Մայդանի կրկնման հավանականության մասին: Ակնհայտ է, որ ադրբեջանական իշխանությունները ներկա պահին այդ սպառնալիքներին առանձնապես մեծ ուշադրություն չեն դարձնում: Դեռ ավելին, պաշտոնական Բաքուն ամենաբարձր մակարդակով ստեղծում է լարվածություն և նույնիսկ հանդես է գալիս արևմտյան դիվանագետներին ուղղված բարոյախրատական ճառերով: Օրինակ՝ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեխտիևը հանդես եկավ ԱՄՆ դեսպանին ուղղված խիստ քննադատությամբ՝ մեղադրելով նրան ոչ պրոֆեսիոնալիզմի և Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու մեջ, հընթացք քննադատելով նաև ԱՄՆ հետխորհրդային տարածքում իրականացվող ողջ արտաքին քաղաքականությունը: Ինչպես Ռ. Մեխտիևն է նշում, «դեսպան Մորնինգսթարի ու նրա գործունեությունը ղեկավարողների աշխարհայացքը մնացել է անցյալում ու ժամանակի հետ գտնվում է հակասության մեջ: Բազմաբևեռ աշխարհը կոչ է անում հրաժարվել գաղութային մտածելակերպից»:

Այս բոլորի ֆոնին մի բան ակնհայտ է, որ հանրային դիվանագիտությունը դարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում գտնվում է որոշակի ճգնաժամի մեջ: Սակայն դա չի նշանակում, որ դրանից պետք է հրաժարվել: Ընդհակառակը՝ այդ հարցի հետ կապված որքան բարդանա իրավիճակն Ադրբեջանում, այնքան և՛ Հայաստանում, և՛ Լեռնային Ղարաբաղում պետք է պնդեն այդ ձևաչափի ակտիվացման ու շարունակման վրա: Դա բխում է հակամարտող բոլոր կողմերի շահերից, քանի որ վաղ թե ուշ, մենք նորմալ հարաբերություններ պետք է հաստատենք հարևանների հետ, իսկ այդ գործում իր ուրույն տեղը կարող է ունենալ հենց հանրային դիվանագիտության ձևաչափը, հայ և ադրբեջանական էլիտաների ու հասարակությունների միջև ծավալված բաց, թափանցիկ երկխոսությունը:

Ինչո՞վ է օգտակար ադրբեջանական
փորձագետների, գիտնականների և
ոչ կառավարական դաշտի ներկայացուցիչների
հետ համագործակցության փորձը

*Ստեփան Գրիգորյան,
Գլոբալիզացիայի և տարածաշրջանային
համագործակցության
վերլուծական կենտրոնի տնօրեն*



Ելույթիս սկզբում կուզենայի մի քանի խոսք
ասել Լեռնային Ղարաբաղի հակամարտության
շուրջ ստեղծված իրավիճակի մասին վերջին երեք
տարիների ընթացքում:

Առաջին՝ ցավով պետք է նշեմ, որ
բանակցային գործընթացը, որը արդեն երկար
տարիներ ընթանում է Մինսկի խմբի
շրջանակներում, գտնվում է սառեցված
վիճակում՝ սկսած 2012 թ. սկզբից և առ այսօր:

Երկրորդ՝ իհարկե, դրական է, որ համարյա
երկու տարվա ընդմիջումից հետո (2012թ.
հունվար – 2013թ. նոյեմբեր) Հայաստանի և

Աղբբեջանի նախագահները հանդիպեցին Վիեննայում (2013թ. նոյեմբեր) և Սոչիում (2014թ. օգոստոս):

Երրորդ՝ սակայն, իրավիճակը բանակցային գործընթացում գտնվում է փակուղային իրավիճակում և անգամ Հայաստանի և Աղբբեջանի նախագահների միջև հանդիպումները՝ կայացած Վիեննայում և Սոչիում, չհանգեցրին բանակցային գործընթացի վերականգմանը:

Չորրորդ՝ վերջին երեք տարիներն աչքի ընկան լարվածության աննախադեպ բարձր աստիճանով, ինչպես Լեոնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի և աղբբեջանական բանակի շփման գծում, այնպես էլ հայ-աղբբեջանական սահմանին՝ Նոյեմբերյանի շրջանում: Այն փաստը, որ միայն տասը օրվա ընթացքում, 2014թ. հուլիսի վերջից մինչև օգոստոսի սկիզբը, երկուստեք զոհվեցին այնքան զինվորականներ, ինչքան որ ամբողջ 2013թ. ընթացքում, արդեն շատ բանի մասին է վկայում:

Հինգերորդ՝ անհանգստացնում է Հարավային Կովկասի շարունակվող սպառազինումը, ինչի նախաձեռնողն Աղբբեջանն է: Անհանգստացնում է նաև այն, որ Հայաստանի ռազմավարական գործընկեր Ռուսաստանն ամերիկյան միլիարդավոր դոլլարների

ժամանակակից ռազմավարական և հարձակվողական սպառազինություններ է վաճառում Ադրբեջանին:

Վեցերորդ՝ ակնհայտ է, որ հակամարտող կողմերի միջև գոյություն ունի անվստահություն և այն խորանում է ոչ միայն պաշտոնական մակարդակում, այլ և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի քաղաքացիների միջև, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի քաղաքացիների միջև:

Յոթերորդ՝ վերջին ժամանակներս տեսանելի է դառնում այն, որ միջազգային միջնորդները՝ ի դեմս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների (ԱՄՆ, Ռուսաստան և Ֆրանսիա), չունեն միասնական մոտեցում և տեսանկյուն՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման վերաբերյալ: Այսպես՝ անգեն աչքով էլ երևում է, որ Ռուսաստանը չի շտապում հակամարտության լուծման հետ, իսկ ԱՄՆ-ն և Ֆրանսիան, որոնք ավելի հակված են հակամարտության լուծմանը, չգիտեն ինչպես իրագործել իրենց ցանկությունը, ինչպես նաև չունեն լուրջ լծակներ՝ հարավկովկասյան տարածաշրջանում ազդեցության համար:

Ի՞նչ անել և որո՞նք են գլխավոր մարտահրավերները՝ ծառայած Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի առջև:

Ստեղծված իրավիճակում, ինչպես մեզ թվում է, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունները պետք է անեն ամեն ինչ, որպեսզի թույլ չտան ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափի փլուզումը: Բանն այն է, որ հենց այդ ձևաչափի շրջանակներում են մշակվել Մադրիդյան սկզբունքները, որտեղ ասվում է ազգերի ինքնորոշման իրավունքի մասին և Լեռնային Ղարաբաղի տարածքում հանրաքվե անցկացնելու մասին: Բացի այդ, այդ ձևաչափի գլխավոր դերակատարները՝ ԱՄՆ-ն, Ռուսաստանը և Ֆրանսիան, երկրներ են, որոնք լավ են հասկանում դարաբաղյան հակամարտությունը և բավականին օբյեկտիվ են: Ռուսաստանի դեպքում իրավիճակը, իհարկե, հնարավոր է փոխվի, և Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղի հարցում կարող է ժամանակի ընթացքում գրավել ադրբեջանամետ դիրք՝ հանուն Ադրբեջանի Եվրասիական ինտեգրման ներքաշման: Այդ պատճառով բոլոր փորձերը տեղափոխել հակամարտության լուծումը այլ ձևաչափեր (օրինակ՝ ՄԱԿ-ի կամ ԵԽ-ի ձևաչափ), որտեղ որոշումները կարող են կայացվել երկրների ձայների մեծամասնությամբ և շեշտը չդրվել ազգերի ինքնորոշման իրավունքի վրա, պետք է անցանկալի լինեն հակամարտության հայկական կողմերի համար: Հայաստանը պետք է շարունակի Լեռնային Ղարաբաղի չճանաչման

քաղաքականությունը, քանի դեռ կա ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում բանակցային գործընթացի շարունակման հնարավորությունը: Ավելին, պաշտոնական Երևանը չպետք է վախենա ցուցաբերել պատրաստակամություն վերստին սկսել բանակցություններ ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում, ինչպես նաև ցուցաբերել պատրաստակամություն գնալ փոխզիջումների հակամարտության լուծման ընթացքում: Այդպիսի դիրքորոշումը կուժեղացնի Հայաստանին միջազգային արենայում և ցույց կտա միջազգային հանրությանը Բաքվի ոչ պատրաստ լինելը փոխզիջումներին:

Այսօր Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի առջև ծառայած են բազմաթիվ մարտահրավերներ և սպառնալիքներ՝ սկսած Ադրբեյջանի կողմից հնարավոր ագրեսիայից (ինչի հավանականությունն այսօրվա պայմաններում այնքան էլ մեծ չէ, սակայն միշտ պետք հաշվի առնվի մեր կողմից), Ռուսաստանի կոշտ քաղաքականությունը հետխորհրդային տարածքում (ինչը կարող է բերել Կարսի մարզի պատմության կրկնությանը, երբ Ռուսաստանը, հաշվի չառնելով Հայաստանի կարծիքը, հանձնեց այն Թուրքիային) և վերջացրած Հայաստանի ինքնիշխանության մակարդակի թուլացումով՝ եվրասիական միությանը ինտեգրման պատճառով, ինչը ի դեպ կարող է թուլացնել

Հայաստանի ազդեցությունը դարաբաղյան հակամարտության լուծման հարցում:

Անցնենք վերլուծաբանների, գիտնականների և Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ոչ կառավարական դաշտի ներկայացուցիչների դերի ուսումնասիրմանը դարաբաղյան հակամարտության լուծման հարցում: Մենք միշտ կարևորել ենք վերլուծաբանների, գիտնականների և ոչ կառավարական դաշտի ներկայացուցիչների համագործակցությունը, որովհետև այդպիսի համագործակցությունը կարող է բերել հակամարտող կողմերի միջև վստահության ձևավորմանը և նպաստել հակամարտության լուծմանը: Հաշվի առնելով այն, որ սկսած 90-ական թվականներից, դարաբաղյան հակամարտության սկզբից՝ շփումը հայերի և ադրբեջանցիների միջև կտրուկ նվազել է, երկար տարիներ է, ինչ հայ-ադրբեջանական սահմանը փակ է, իսկ ադրբեջանական բանակի և Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի միջև շփման գիծը հիշեցնում է մարտի ճակատ, քաղաքացիական հասարակության նշանակությունը աճում է: Ավելին՝ բարդ է պատկերացնել, թե ինչպե՛ս կարելի է իրականացնել դարաբաղյան հակամարտության նույնիսկ լավագույն լուծումը ատելության, փոխադարձ թշնամանքի ու անվստահության

քարոզչության պայմաններում: Ցավոք, այս անվստահությունն ուժեղ է ոչ միայն պաշտոնական անձանց շրջանակներում, այլև հայ և ադրբեջանցի քաղաքացիների միջև: Այդ պատճառով ոչ պաշտոնական երկխոսությունը Հայաստանի և Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև կարող է արդյունավետ մեխանիզմ դառնալ ներքնից իշխանությունների ճնշման ԼՂ հարցի փոխընդունելի լուծումներ գտնելու համար:

2004թ. ի վեր Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը (ԳՏՀՎԿ) մեծ թվով ծրագրեր է իրականացրել հայ և ադրբեջանցի փորձագետների, գիտնականների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և վերլուծական կենտրոնների ներկայացուցիչների մասնակցությամբ: Անցկացվել են տարբեր միջոցառումներ՝ գիտաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ, աշխատանքային հանդիպումներ և հեռուստահաղորդումներ ինչպես Երևանում, այնպես էլ Թբիլիսիում, Ստամբուլում և Կիևում: Միջոցառումներն ունեին ինչպես երկկողմ (հայ-ադրբեջանական), այնպես էլ բազմակողմ ձևաչափեր (հայ-ադրբեջանա-վրացական, հայ-ադրբեջանա-թուրքական, ինչպես նաև ձևաչափեր, որտեղ կային ռուսաստանցիներ,

եվրոպացիներ և այլ պետությունների ներկայացուցիչներ): Կարևոր է նաև ուշադրություն դարձնել միջոցառումներին մեր կողմից ընտրված թեմաներին: Մենք չէինք սահմանափակվում միայն դարաբաղյան և այլ հակամարտություններին վերաբերող թեմաներով, այլ նաև անցկացնում էինք միջոցառումներ՝ նվիրված եվրոպական ինտեգրացիային և այն ծրագրերին, որոնք իրականացվում են Եվրամիության կողմից Հարավային Կովկասում (օրինակ՝ «Արևելյան Գործընկերություն» ծրագիրը): Բացի այդ մեծ ուշադրություն էր դարձվում տարածաշրջանային անվտանգության հարցերին և ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հարցերին, հայ-թուրքական հարաբերություններին և հետխորհրդային տարածքում ընթացող գործընթացներին: Մեծ տեղ էին զբաղեցնում թեմաները՝ կապված Հարավային Կովկասի ժողովուրդների պատմական ժառանգության հետ, եվրոպական երկրների միջև պատմական խնդիրների հաղթահարման փորձին, մեր հասարակություններում հանդուրժողականության և համբերատարության դաստիարակման հարցերին:

ԳՏՀՎԿ-ն ադրբեջանական գործընկերների հետ համատեղ հրատարակել են գրքեր և բրոշուրներ, ինչպես նաև համատեղ արվել են հայտարարություններ: Այսպես՝ 2010 թվականին

ԳՏՀՎԿ-ն ադրբեջանական «Յ-րդ Հայացք» կազմակերպության հետ հարց բարձրացրեց ադրբեջանական բանակի և Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպան ուժերի շփման գծից, ինչպես նաև Նոյեմբերյանի շրջանի հայ-ադրբեջանական սահմանից դիպուկահարների հեռացման անհրաժեշտության մասին: Դա առավել կարևոր է այն իսկ պատճառով, որ հենց Ադրբեջանն է հրաժարվում դիպուկահարների հեռացումից: Մինչդեռ հասկանալի է, որ դա կարևորագույն հարցերից է, որի լուծումը կարող է լրջորեն ազդել հակամարտող կողմերի իրար հանդեպ վստահության մակարդակի բարձրացման վրա: Ակնհայտ է, որ դիպուկահարների գնդակներից զինվորների զոհվելու միայն փաստը քչացնում է բանակցությունների և հակամարտությունը մոտ ապագայում լուծելու հնարավորությունը:

Բացի այդ, ԳՏՀՎԿ-ի փորձագետները մասնակցել են տարբեր գիտաժողովների՝ նվիրված հարավկովկասյան և այլ հակամարտությունների լուծմանը, օրինակ՝ Ավստրիայի Պաշտպանության նախարարության կողմից նախաձեռնած ձևաչափում, Շվեյցարիայի Արտաքին գործերի նախարարության՝ Ժնևյան գործընթաց և այլն:

Մեր կենտրոնը ադրբեջանական գործընկերների հետ համատեղ լրջագույն աշխատանք են տարել միջազգային

կազմակերպություններում՝ առաջին հերթին ԵԱՀԿ-ում և ԵՄ-ում, նաև տարբեր եվրոպական երկրների դիվանագիտական շրջանակներում քաղաքացիական հասարակության («քաղաքացիական դիվանագիտության») ազդեցության ուժեղացման գործում: Այսպես՝ տարբեր տարիների ընթացքում ԵԱՀԿ-ում և ԵՄ-ում նախագահող տարբեր երկրների պաշտոնական ներկայացուցիչներին փոխանցվել են տարբեր նյութեր՝ դարաբաղյան հակամարտության խաղաղ ճանապարհով լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ: «Քաղաքացիական դիվանագիտության» այդ աշխատանքի արդյունքը այն էր, որ վերջին տարիներին ԵԱՀԿ-ում նախագահող (Ղազախստան, Լիտվա, Ուկրաինա) և ԵՄ-ում նախագահող (Լիտվա) երկրների առաջնահերթություններում իրենց տեղը գտան հարցեր՝ դարաբաղյան հակամարտության վստահության հաստատման մթնոլորտի, դիպուկահարների հեռացման, համատեղ նախաձեռնությունների իրականացման և այլնի վերաբերյալ: Այսպես՝ 2013թ. վերջին, Շվեյցարիայի Արտաքին Գործերի Դաշնային դեպարտամենտի նախագահ, Դաշնային խորհրդական և ԵԱՀԿ-ի 2014թ. նախագահ Դիոյե Բուրկիսալտերը հայտարարեց, որ Շվեյցարիան՝ որպես ԵԱՀԿ նախագահ, հնարավորություններ

կորոնի, որպեսզի նպաստի երկխոսությանը դարաբաղյան հակամարտության կողմերի միջև ու վստահության միջոցների ամրապնդմանը և ակտիվորեն կաջակցի և կամրապնդի գոյություն ունեցող միջնորդական մեխանիզմները՝ այնպիսիք, ինչպիսիք են ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացը: «Բացի այդ, Շվեյցարիան կփորձի հեշտացնել մարդկանց միջև շփումները և կաջակցի տարածաշրջանում քաղաքացիական հասարակության ծրագրերին», - ասաց նա: Կարծում ենք շատ կարևոր է, որ ԵԱՀԿ-ում Շվեյցարիայի նախագահության ընթացքում դարաբաղյան հակամարտության համատեքստում շեշտը դրվի վստահության միջոցների վրա: Իսկապես անվստահության բարձր մակարդակը դարաբաղյան հակամարտության կողմերի միջև և մարդկանց միջև շփումների բացակայությունը թույլ չեն տալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցային գործընթացում հասնել կոնկրետ պայմանավորվածությունների:

Արդեն երկար տարիներ է, ինչ Լեոնային Ղարաբաղը չի հանդիսանում ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցային գործընթացի լիիրավ կողմ: Մեր կարծիքով, առանց Լեոնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցության բարդ կլինի հասնել հակամարտության լուծման գործընթացի իրական առաջընթացի: Պարզ է, որ պարզապես

անհնար կլինի Լեոնային Ղարաբաղի վերաբերյալ վերջնական որոշում կայացնել առանց հակամարտության մեջ ուղղակիորեն ներգրավված ժողովրդի մասնակցության ու համաձայնության: Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ կլինի ակտիվացնել Հայաստանի դիվանագիտական ջանքերը, որպեսզի հաշվի առնվի Լեոնային Ղարաբաղի ընտրված իշխանությունների կարծիքը: Դա պետք է իրականացվի ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից Ստեփանակերտ այցելության միջոցով (ինչը վերջին 3-4 տարիների ընթացքում արդեն տեղի է ունենում), այնպես էլ քանակցային գործընթացում Լեոնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչների ընդգրկման միջոցով: Լեոնային Ղարաբաղի հակամարտությունում Ադրբեջանը պետք է հրաժարվի Ղարաբաղը չճանաչելու իր քաղաքականությունից: Լեոնային Ղարաբաղի հետ կապված տարբեր, նույնիսկ հումանիտար բնույթի նախաձեռնությունների արգելափակումը, տարբեր երկրների քաղաքացիներին և խորհրդարանների անդամներին միայն Ղարաբաղ այցելելու կապակցությամբ Ադրբեջանում “persona non grata” հայտարարելը չի նպաստում քանակցային գործընթացի բարելավմանը և ուժեղացնում է հակամարտության կողմերի անվստահությունը միմյանց նկատմամբ: Ուստի,

մենք համարում ենք, որ հետաքրքիր և դրական ներդրմամբ ձևաչափ կարող է լինել երկկողմանի ձևաչափը՝ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ոչ կառավարական սեկտորի մասնակցությամբ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված իրավիճակի փոփոխման համար անհրաժեշտ է իրականացնել ընդհանուր շահ ունեցող մի շարք ծրագրեր. ցավոք, ներկա պահին Ադրբեջանի ղեկավարությունը հրաժարվում է որևէ ընդհանուր նախաձեռնությունից՝ Հայաստանի առջև դնելով նախապայմաններ:

Այսպես, Սադախլոյում շուկայի վերականգնումը, որը գտնվում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև, կարող է նպաստել առևտրատնտեսական համագործակցությանը և բաժանված հասարակությունների մարդկանց միջև կապին: Հաշվի առնելով Վրաստանի նոր կառավարության քաղաքականությունը՝ այս գաղափարը կարող է իրականացվել: Լեռնային Ղարաբաղում համատեղ ջրի նախագծերը, օրինակ՝ Մարսանգի ջրամբարում վերանորոգման աշխատանքները, նույնպես կարող են էականորեն փոխել հակամարտության շրջանում մթնոլորտը:

Եզրակացնելով նաև ուշադրություն դարձնենք այն պարզ առավելությանը, որը Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը ունեն

Ադրբեջանի նկատմամբ հակամարտության հարցում: Դա բավականին բարձր մակարդակի ազատություններն են Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Չնայած գոյություն ունեցող խնդիրներին՝ այսօր Հայաստանում բավականին ազատ են գործում քաղաքական ընդդիմությունը, լրատվական միջոցները, ոչ կառավարական կազմակերպությունները և փորձագետները տարբեր ոլորտներում, ինչպիսիք են՝ բնապահպանությունը, մարդու իրավունքները, տարածաշրջանային հարցերի և հակամարտության լուծումը, կանանց իրավունքները: Հենց այս ազատությունները թույլ են տալիս Հայաստանին միջազգային հարթակում ավելի ձեռնառու լույսով ներկայանալ, քան Ադրբեջանը, որը նավթի և գազի խաղաքարտն է օգտագործում միջազգային քաղաքականությունում: Վստահ եմ, որ Հայաստանի իշխանությունը պետք է ամեն ինչ անի, որպեսզի չկրճատվեն ազատությունները քաղաքացիական՝ ժողովրդական դիվանագիտության սեկտորում, ինչը մասամբ կոմպենսացնում է գազի և նավթի բացակայությունը: Փորձագետները, հասարակական կազմակերպությունները և վերլուծական կենտրոնները, որոնք նաև զբաղվում են Լեռնային Ղարաբաղի հարցով, հանդիսանում են հայկական դիվանագիտության լուրջ

պահուստ, որը անհրաժեշտ է ուժեղացնել և զարգացնել:

**Ու՛մ են պետք լինելու հայ-
ադրբեջանական ծրագրերը
2014 թվականից հետո**

Ինչու՞ մենք, կամ՝ մեր մասին

*Հատրա Բադդասարյան
«Ռեզիոն» հետազոտական կենտրոնի
տնօրեն*



Ամեն ինչ սկսվեց այն բանից հետո, երբ մեզ՝ «Ռեզիոն» հետազոտական կենտրոնին ու Ադրբեջանում մեր երկարամյա գործընկեր կազմակերպությանը՝ Խաղաղության և Ժողովրդավարության ինստիտուտին, մեր

համատեղ ծրագրերի հետ միասին այս տարվա գարնանը «լրտեսական վթարի» ենթարկեցին Ադրբեջանի իշխանությունները:

Ծայրահեղ կոշտ մեղադրանքներով մեր ծրագրերի երեք մասնակիցների՝ լրագրող Ռատոֆ Միրկադիրովի, ապա նաև՝ Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտի տնօրեն Լեյլա Յունուսի ու նրա ամուսնու՝ նույն ինստիտուտի Բախումնաբանության և միգրացիայի բաժնի ղեկավար Արիֆ Յունուսի ձերբակալությունները խափանեցին ոչ միայն մեր, այլև հայկական ու ադրբեջանական այլ կազմակերպությունների համատեղ աշխատանքները:

Չնայած որ քաղաքական դրդապատճառներով ՀԿ-ների ներկայացուցիչների ձերբակալությունների ու տարբեր ժամկետներով դատապարտումների շարքը սկսվել էր 2013 թվականից, Ադրբեջանում կայացած նախագահական ընտրություններից անմիջապես հետո, այս տարվա ներադրբեջանական պատժիչ ալիքը բախվեց աննախադեպ միջազգային արձագանքների ալիքի հետ, որտեղ կա ամեն ինչ՝ դատապարտող ու խիստ ձևակերպումներով հայտարարություններից մինչև դիվանագիտական լեզվով հնչեցվող հորդորներ ու կոչեր: Ե՛վ այս, և՛ մյուս դեպքում պահանջվում է անհապաղ ազատ արձակել բոլոր ձերբակալվածներին (մեր

գործընկեր Լեյլա Յունուսի պնդումներով նրանց թիվը, առանց իրեն ու իր ամուսնուն էլ հաշվի առնելու, այդ ընթացքում անցել էր 100 հոգու սահմանը) ու կատարել մարդու իրավունքների ու ազատությունների ոլորտում միջազգային ստյանների առջև ստանձնած պարտավորությունները: Բոլոր ձեռքակալվածները, ներառյալ՝ մեր գործընկերները, հայտարարվեցին խղճի կալանավորներ:

Սակայն այդ երկու ալիքների բախումներից ոչ մի օգտակար չոր մնացորդ չարձանագրվեց, առ այսօր առարկայական արդյունքներ չկան. չնայած հայտարարություններն արվել են ոչ միայն միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից, որոնց Ադրբեջանը միշտ է քամահրանքով վերաբերվել անընդհատ քննադատվելու պատճառով, այլև այն երկրների կառավարությունների, այն եվրոպական կառույցների անունից, որոնց հետ Ադրբեջանը հաշվի չնստել, ըստ էության, չի կարող: Անցած ներքին ռեպրեսիվ ամիսները համընկան Ադրբեջանի՝ ԵՄ Նախարարների կոմիտեում վեցամսյա նախագահության հետ (2014 թ. մայիս-նոյեմբեր):

Եղել են Ադրբեջանի իշխանությունների մի քանի այսպես կոչված մարդասիրական ժեստեր. լրտես հռչակված լրագրող Ռաուֆ Միրկադիրովին

երկու օրով թույլ տվեցին մասնակցել իր հոր
թաղմանը, իսկ արդեն երկու տարուց ավելի
Իրանի օգտին լրտեսության մեղադրանքով
դատապարտված լրագրող, «Թալիշի սաբո» թերթի
խմբագիր Հիլալ Մամեդովին հոկտեմբերին թույլ
տվեցին մասնակցել իր աղջկա հարսանիքին:
Մասնակցեցին ու վերադարձան մեկուսարաններ:
Հոկտեմբերին համաներումով ազատ արձակված
84 բանտարկյալների շարքում 4-ը ճանաչված են
որպես քաղբանտարկյալներ, բայց նրանք
հանրահայտ անձինք չեն, այլ՝ երիտասարդ
ակտիվիստներ:

Սկզբում թվում էր, թե Ադրբեջանի
իշխանությունների նպատակը պարզապես
հայկական և ադրբեջանական
կազմակերպությունների միջև կապերի իսպառ
խզումն է. մի նպատակ, որը մեծ հաշվով
նորություն չէր:

Տարբեր առիթներով ու տարբեր ձևերով՝
հայտարարություններով, արտասահմանցի
քաղաքացիների ու նույնիսկ միջազգային
կազմակերպությունների ներկայացուցիչների
այսպես կոչված «սև ցուցակներով» և այլ էկզոտիկ
միջոցներով, Ադրբեջանը միշտ է հասկացնել տվել,
որ նախքան Ղարաբաղյան հակամարտության
կարգավորումը չի ընդունում, արդյունավետ չի
համարում կամ պարզապես դեմ է հայկական
կողմի հետ ցանկացած առնչության, լինի դա

մշակութային միջոցառում, թե հասարակական շրջանակների միջև հունամիտար ու այլ ոլորտների համագործակցություն: Ինչին ի պատասխան երկրի ներսում հայերի հետ աշխատող շրջանակները հնչեցրել են, որ եթե հայերի հետ կարող են հանդիպել երկրի իշխանությունները տարբեր միջոցառումների շրջանակներում, ապա ինչո՞ւ դա չեն կարող անել նաև լրագրողները, փորձագետները, իրավապաշտպաններն ու այլոք: Ամենախիստ պատիժը հայերի հետ համագործակցելու համար անցած տարիներին եղել է այս կամ այն գործչին դավաճանի պիտակ կպցնելը, սակայն այդ քարոզչական ակցիաները կարճ ընթացքում անցնում-գնում էին, և ամեն ինչ վերադառնում էր իր հունին, համատեղ աշխատանքները շարունակվում էին: Հայերի հետ համագործակցողներին քննադատելը մի տեսակ ներքին արարողակարգային բնույթ ունեւ և որևէ իրավական հետևանքների չէր հանգեցնում: Հայերի հետ համագործակցությունը օրենսդրորեն արգելված չէր, սակայն ակնհայտ էր, որ անհրաժեշտ պահին դրա համար հնարավոր է պատժվեն ադրբեջանական ՀԿ-ների ներկայացուցիչները: Այդ համագործակցությունն ադրբեջանական իշխանությունների համար դարակում պահված հաղթաթղթի նշանակություն

ուներ, որը կարող էր մեջտեղ բերվել ցանկացած «ճիշտ» պահի:

Բայց այս անգամ մեր գործընկերների ձեռքակալությունները և Հայաստանի օգտին լրտեսելու մեղադրանքը մյուսների վրա սառը ցնցուղի ազդեցություն ունեցավ: Նախ՝ քանի որ մտացածին ու իրավական տեսանկյունից անհեթեթ ու անհիմն մեղադրանքներ էին առաջ քաշվել, որոնք իրավական կամայականությունների պայմաններում հերքելը պարզապես դժվար է (այդ հերքումները հաշվի առնող չի լինելու): Երկրորդ՝ քանի որ մեր գործընկերների հետ նույնիսկ մեկուսաբաններում սկսեցին վարվել առանձնակի անողորքությամբ՝ ընդհուպ մինչև մեկուսաբանի աշխատակցի ձեռքերով Լեյլա Յունուսին ծեծի ենթարկելը, մոտ մեկ ամիս նրան անհրաժեշտ դեղորայք չտալը և այլն: Արիֆ Յունուսը խստագույն մեկուսացման մեջ է, նրա մասին առհասարակ ոչինչ չեն հայտնում ադրբեջանական ՋԼՄ-ները: Ռաուֆ Միրկադիրովի պաշտպանական իրավունքների բազմաթիվ խախտումների ու ոտնահարումների մասին հայտարարություններով մի քանի անգամ հանդես է եկել նրա փաստաբանը: Հայտնվում է նաև փաստաբանների ահաբեկման դեպքերի մասին:

Սակայն հետո պարզ դարձավ, որ խնդիրը միայն հայ-ադրբեջանական

համագործակցությունը չէ, հարցն առհասարակ
ՀԿ-ներն են, որոնք ճնշված ու ըստ էության թույլ
ընդդիմության պարագայում իշխանություններին
դեմ գնացող լրջագույն ուժ էին դառնում:
Ադրբեջանում ՀԿ-ների դեմ արշավանքը
պաշտոնապես անվանում են երկրի
անվտանգության ամրապնդմանն ուղղված
քայլեր, որոնց արդյունքում երկրի ներսում ու
դրսում հայտնի լրագրողներ,
իրավապաշտպաններ, փաստաբաններ և այլ
անձինք հանկարծ մեկ-երկու ամսվա ընթացքում
«բացահայտվեցին» որպես զենքի առևտրով,
թմրաբիզնեսով զբաղվողներ և այլ կարգի
հանցագործներ: Մեկուսարաններում հայտնվեցին
հասարակական ու իրավապաշտպան
գործունեությամբ զբաղվող անձինք, ովքեր
ընդհանրապես կապ չեն ունեցել հայկական
կազմակերպությունների հետ, նրանց հետ երբեք
ծրագրեր չեն իրականացրել: Այդպիսով՝ կոլապսի
մեջ հայտնվեց Ադրբեջանի հասարակական
սեկտորի ամենահայտնի ու համբավ ունեցող
հատվածը:

Պարզ դարձավ, որ մեր գործընկերների
ձեռքակալությունները և ընդհանրապես հայ-
ադրբեջանական համատեղ ծրագրերի կասեցումը
ավելի մեծ գործընթացի՝ Ադրբեջանի
իշխանությունների կողմից առհասարակ
հասարակական սեկտորի առավել ակտիվ

հատվածի ոչնչացման միայն մի բաղկացուցիչ մասն է: Հիմա չկա Լեյլա Յունուս-Արիֆ Յունուս-Ռաուֆ Միրկադիրով առանձին լրտեսական ու դավաճանական սենսացիոն պատմությունը, քանի որ ռեպրեսիաների ընդհանուր ֆոնն է սենսացիոն ու աննախադեպ: Մեր գործընկերների դեմ «դարակում պահված» մեղադրանքը հայերի օգտին լրտեսությունն է, այն իրեն «սպասեցնել տվեց» Ռաուֆ Միրկադիրովի դեպքում՝ 5-6 տարի (մեղադրական հայտարարության մեջ նշվում է, որ Միրկադիրովն իր պետական դավաճանությունը սկսել է 2008-2009 թվականներից), իսկ Յունուս ամուսինների դեպքում՝ նույնիսկ տասնամյակներ շարունակ (մեղադրական հայտարարության մեջ նշվում է մոտավորապես նման ձևակերպում): Հայտարարում են նաև, որ նրանք մի ամբողջ լրտեսական ցանց են ձևավորել Ադրբեջանում, նպաստել են Ադրբեջանում հայկական դիրքորոշումների տարածմանը և ավելի ու ավելի շատ համակիրներ ունենալուն: Բայց սա ամենը չէ: Որպես ՀԿ-ի ղեկավարներ Յունուս ամուսինները մեղադրվում են նաև մյուս ՀԿ-ների ներկայացուցիչների դեմ առաջ քաշված մեղադրանքների ողջ «փաթեթով»՝ ֆինանսական մեքենայություններ, պաշտոնական դիրքի չարաշահում, խարդախություն:

Ըստ էության, ադրբեջանական կողմի հետ մեր կենտրոնի ծրագրերն ուղղված էին հայ և

ադրբեջանական հասարակություններում միմյանց մասին շրջանառվող դիսկուրսների ուսումնասիրությանը, մենք իրականացնում էինք նաև մեդիա-հաղորդակցական ծրագրեր, որոնց մասնակցում էին հայաստանյան ու ադրբեջանական ՁԼՄ-ները, առանձին փորձագետներ: Հայկական և ադրբեջանական ՁԼՄ-ների մասնակցությամբ մեր օնլայն հարցազրույցները, հրատապ միջազգային գործընթացների ու իրադարձությունների շուրջ տարբեր երկրների, այդ թվում՝ ադրբեջանական փորձագետների մասնակցությամբ մեր ինտերնետ-քննարկումները, վիդեո պատմություններն ու վիդեոկամուրջները տարբեր տարիներին մենք կազմակերպում էինք մեր կենտրոնի կայքերում

(www.caucasusjournalists.net,

www.regioncenter.info), իսկ սկսած 2012

թվականից՝ «Հասարակական երկխոսություններ»

(www.publicdialogues.info) անունը կրող համատեղ

ինտերնետ-հարթակում: Այն հասցրեց ակտիվ

գործել ընդամենը 1.5 տարի, բայց արդեն

հավակնում էր վերածվել հայ-ադրբեջանական

ինտերնետ հաղորդակցական մշտական

խողովակի, որի միջոցով կարելի էր գտնել երկու

հասարակությունների կյանքի տարբեր

ոլորտներին առնչվող տեղեկատվություն՝

ստացված «առաջին ձեռքից»:

Չնայած որ մեր գործընկերների
ձեռքբերվածություններից հետո կայքը չի
թարմացվում ավանդական սկզբունքով (այսինքն՝
երկու կողմերում պատրաստված նույն խնդրի
մասին պատմող նյութեր), այն ներկայումս
հասանելի է այցելուներին:

Նրանք, ովքեր կայքն ուսումնասիրելով
կուզենան հասկանալ, թե «այդ ի՞նչ էին արել
հիմնադիրները», որի համար ադրբեջանական
կողմը հայտնվեց փակի տակ, իսկ մեր կենտրոնը
ադրբեջանական իշխանությունների «թեթև
ձեռքով» հռչակվեց հայկական հատուկ
ծառայությունների դրածո կառույց, պետք է
նախօրոք հիասթափեցնեմ, որ «տաք
շագանակներ» այստեղ չկան, ինչպես և չկա
սկզբունքային հարցերի շուրջ համաձայնություն:
Բայց կան քաղաքակիրթ բանավեճի օրինակներ,
նաև մեզ հետ համագործակցող հայկական և
ադրբեջանական ՁԼՄ-ների (դրանք շուրջ 19
տարբեր լրատվամիջոցներ էին) հետ
աշխատանքի սկզբունք՝ սեփական լսարաններին
տեղեկատվությունը ներկայացնել առանց
խեղաթյուրման և քարոզչական
մեկնաբանությունների:

Մեր ծրագրի մյուս առանձնահատկությունը
Արիֆ և Լեյլա Յունուսների անձերն են: Երկուսն էլ
Ադրբեջանում և արտասահմանում հայտնի
գործիչներ են: Նախքան ձեռքբերվածությունը Լեյլա

Յունուսն ավելի շատ հայտնի էր իր իրավապաշտպանական գործունեությամբ: Նա ամենաաղմկոտ և իշխանությունների հետ ոչ մի գործարքի չգնացող ընդդիմադիր իրավապաշտպանի համբավ ունի: Հասկանալի է, որ իր երկարամյա գործունեության ընթացքում նա հասցրել էր վաստակել «ոչ բարեկամաբար» վերաբերվողների բանակ և՛ իշխանական, և՛ յուրայինների շրջանակներում: Բայց այս վերջին հանգամանքը մի առանձին պատմություն է «հարմարվողների և չհարմարվողների մասին» ամեն տեղ ու բոլոր երկրներում առկա այլ պատմությունների նման:

Հայ-ադրբեջանական հասարակական համագործակցության ապագան

ԵՄ մարդու իրավունքների գծով կոմիսար Նիլս Մուժնիեկսը հոկտեմբերի 22-24-ը գտնվում էր Բաքվում: Ինչպես նշվում է այդ առիթով արված հայտարարության մեջ, դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջին շրջանում ձերբակալվել էին նրա գրասենյակի հետ աշխատող պրակտիկոսներն բոլոր ադրբեջանական գործընկերները, ինչն անհնար է դարձնում «մարդու իրավունքների ոլորտում ԵՄ համապատասխան այդ ենթակառույցի աշխատանքն Ադրբեջանում»:

Սա Ադրբեջանում վերջին վեցից ավելի ամիսների ընթացքում տեղի ունեցող ներքին զարգացումների առիթով եվրոպական հերթական բարձրաստիճան այցն էր:

Եվ, իրոք, այս տարեսկզբին Ադրբեջանում պաշտոնապես ընդունվեցին ՀԿ-ների, դրամաշնորհների մասին օրենսդրական փոփոխություններ, որոնք պարզապես անհնարին են դարձնում նրանց գործունեությունը նախկին ռեժիմով: Այս տարեսկզբին «Ոչ պետական կազմակերպությունների (հասարակական միությունների և հիմնադրամների) մասին» և «Երամաշնորհների մասին» օրենքներում կատարված փոփոխությունները լրջորեն սահմանափակում են ՀԿ-ների հնարավորությունները, դարձնելով նրանց պետության ձեռնածուներ ու կամակատարներ, այս կամ այն պաշտոնյայի քմահաճույքից կախման մեջ են զցում: Բացի այդ, հաշվետվողականության համար խախտումների դիմաց սահմանված են ավելի մեծ տուգանքներ, քան ՄՊԸ-ների համար սահմանված տուգանքներն են: ՀԿ-ները պետք է պարբերաբար Արդարադատության նախարարության համապատասխան բաժին ներկայացնեն իրենց կադրային փոփոխությունների մասին տեղեկատվություն և այլն:

Սակայն հոկտեմբերի 18-ին նշված օրենքներում մտցվեցին նոր փոփոխություններ, որոնք արդեն վերաբերում են արտասահմանյան դոնորներին: Ըստ այդ պահանջների այսուհետ Ադրբեջանում գործելու համար նրանք պետք է անցնեն երեք մադերի միջով. նախ՝ պետք է ստանան որպես դոնոր գործելու թույլտվություն, հետո՝ նախատեսված ծրագրերի հավանություն, որ դրանք համապատասխանում են Ադրբեջանի շահերին և դրանք պետք են Ադրբեջանին: Եվ երրորդ՝ հավանության պետք է արժանանան արդեն կոնկրետ ՀԿ-ներն ու նրանց հատկացվող կոնկրետ դրամաշնորհները:

Հասկանալի է, որ մարդու իրավունքների և հայ-ադրբեջանական համագործակցության հետ կապ ունեցող ծրագրերը հավանության չեն արժանանալու, իսկ հակամարտության փոխակերպմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունների մուտքն Ադրբեջան այսուհետ փակ է լինելու:

Հիմա արդեն կարող ենք ասել, որ հայ-ադրբեջանական հասարակական շրջանակների միջև հետագա համագործակցության ապագան առավել քան պարզ է. այն չի լինելու: Պակաս իրատես և փոքր-ինչ ավելի լավատես լինելու դեպքում կարող ենք ասել ավելի մեղմ ձևով՝ այդ ապագան դեռևս անորոշ է:

«Իսկ ձեր ինչի՞ն է պետք մեզ հետ
համագործակցելը, ինչո՞ւ եք այդքան մտահոգ մեր
ներքին խնդիրներով», - գրեց ինձ մի անգամ
ադրբեջանցի ծանոթ լրագրողներից մեկը
Ֆեյսբուքով: Ի դեպ, որքան գիտեմ, նա մի քանի
անգամ մասնակցել է հայ-ադրբեջանական այլ
կազմակերպությունների ուսուցողական
ծրագրերի շրջանակներում անցկացված
հանդիպումներին: Դրանց ընթացքում հայ և
ադրբեջանցի լրագրողներին սովորեցնում էին, թե
ինչպես պետք է լուսաբանել հակամարտությունը
և չսաստկացնել առանց այդ էլ թշնամական
դիսկուրսը հասարակական մակարդակում:
Անկեղծ ասած, այս հարցը դեռ միանշանակ
պատասխան չունի նաև մեզ՝ հայերիս մոտ:

*Բորիս Նավասարդյան
Երևանի մամուլի ակումբի նախագահ*



Մենք միշտ շատ ակտիվ ենք եղել հայ-ադրբեջանական հարաբերություններին և դարաբաղյան հակամարտությանը վերաբերող տարբեր ծրագրերում: Կփորձեմ ներկայացնել մեր գործունեության փուլերը, որոնք շատ տարբերվում են իրարից և կապված են համապատասխան օբյեկտիվ իրավիճակի հետ: Սկսել ենք աշխատել այդ ուղղությամբ 1996 թվականից և առաջին փուլը ընդգրկում էր 1996-1998թթ: Այն բնութագրում են առաջին հերթին նրանով, որ մենք տեսնում էինք և՛ դարաբաղյան հակամարտությունը, և՛ հայ-ադրբեջանական հարաբերությունները Հարավային Կովկասում տարածաշրջանային զարգացումների ներքո և չէինք առանձնացնում բուն հայ-ադրբեջանական երկխոսությունը: Դա շատ կարևոր փուլ էր, քանի որ հնարավորություն տվեց ծանոթանալ տարբեր գործող անձանց, հարցադրումների, տարբեր

մանրամասն խնդիրների հետ, որոնք առկա են: Առաջին շփումները հիմք ծառայեցին հետագա գործունեության համար: Պիտի խոստովանեմ, որ առավել հետաքրքիր էր 1999-2001թթ. փուլը, քանի որ դա այն ժամանակաշրջանն էր, երբ բավականին խորը զարգացումներ էին տեղի ունենում դիվանագիտական մակարդակում. կար իրական որոնում խնդրի կարգավորման ճանապարհին և փորձագիտական հանրությունը, քաղաքացիական հասարակությունը, մամուլը կարողանում էին ներդրում ունենալ այդ գործընթացում և մենք մեր հերթին աշխատում էինք նպաստել կարգավորման օրակարգի և վստահության մթնոլորտի ձևավորմանը: Երևի մեր նվաճումներից այս փուլում այն էր, որ բավականին բացվեց մամուլը երկու երկրների և, անկախ նրանից, թե ինչպիսի երանգներով էր տրվում տեղեկությունը, այն հնարավորություն տվեց երկու հասարակություններին ավելի լավ պատկերացում ստանալ իրար մասին: Դա, բնականաբար, ոչ միայն մեր գործունեության արդյունքն էր, այլ նաև բազմաթիվ այլ ծրագրերի, որոնք իրականացվում էին և՛ միջազգային կառույցների կողմից, և՛ տարածաշրջանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից: Այդ ժամանակաշրջանի ավարտը բավականին տխուր էր, քանի որ մենք համոզվեցինք մեկ բանում, որ մեր

գործունեությունը սխալ կլինի կոչել քաղաքացիական կամ ժողովրդավարական դիվանագիտություն: Այն այդպիսի դերակատարություն, փաստորեն, չունեցավ և դրա պատճառը այդքան էլ մեզանից չէր կախված: Պատճառը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ 2001 թվականին ավարտվեցին վճռական դիվանագիտական ջանքերը՝ գալ ինչ-որ համաձայնության և երբ չկա պաշտոնական մակարդակով ցանկություն հասնել իրական արդյունքի՝ քաղաքացիական հասարակության, փորձագիտական հանրության ներգրավումը, ինքը «քաղաքացիական դիվանագիտություն» հասկացության հետ որևէ առնչություն չի կարող ունենալ, քանի որ այն ոչ թե լրացնում, աջակցում է պաշտոնական քաղաքականությանը, այլ հակասության մեջ է մտնում քաղաքական գործընթացների հետ, համահունչ չէ գերիշխող միտումներին: Դիվանագիտական ջանքերի անհաջողության պատճառը պարզ էր: Կողմերը համոզվեցին, որ իրար վստահել չեն կարող և համապատասխանաբար անկեղծ, կառուցողական երկխոսություն կոնֆլիկտի հաղթահարման թեմայով այլևս հնարավոր չէր, որքան էլ որ միջազգային միջնորդները փորձում էին «ֆասիլիտացիա» անել այդ գործընթացը: Այսինքն՝ խնդրի լուծման հնարավոր մոդելի վրա աշխատանքը շարունակվում էր և, պիտի

խոստովանեմ, որ բավականին արդյունավետ էր հենց 2001-2005թթ. հիմնականում Մինսկի խմբի համանախագահների աշխատանքը, բայց դա համարժեք անդրադարձ չէր գտնում կողմերի դիրքորոշումներում: Այսինքն՝ մոդելներ մշակվում են, բայց հակամարտության անմիջական կողմերը ի սկզբանե գիտեին, որ այդ մոդելները չէին կիրառելու:

Համապատասխանաբար, այս շրջանում մենք ավելի շատ կենտրոնացած էինք ոչ թե երկխոսության ընդլայման, այլ պրոֆեսիոնալ փորձագիտական աշխատանքի վրա՝ հասկանալով, որ էապես ազդել հասարակությունների վրա չենք կարող: Հանրային դաշտում հակառակ պրոցեսն էր ընթանում (հիմա էլ է շարունակվում)՝ թշնամանքի ուժեղացման ուղղությամբ: Բայց մեր փորձագիտական աշխատանքը շարունակվում էր, բավականին հետաքրքիր արդյունքներ էր տալիս այն առումով, որ մենք լավ էինք հասկանում, թե իրենից ի՛նչ է ներկայացնում քաղաքական վերնախավը և՛ Ադրբեջանում, և՛ Հայաստանում, ինչո՛վ են առանձնանում մոտեցումները Լեռնային Ղարաբաղում, ինչպիսի՛ տրամադրություններ են ձևավորվում քաղաքացիների շրջանում, ի՛նչ է իրենից ներկայացնում մամուլը և ի՛նչ օրինաչափություններ կան նրա գործունեության

մեջ, նաև, ինչպե՛ս է փոփոխվում տարածաշրջանում աշխարհաքաղաքական, տեղեկատվական, գաղափարական ենթատեքտը: Այդ տարիներին մենք նաև փորձեցինք ձևավորել եռակողմ՝ ձևաչափը՝ հասկանալով, որ շատ դեպքերում հայ-թուրքական հարաբերությունները կաշկանդված են Ադրբեջանի դիրքորոշմամբ և հակառակը՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա մեծ ազդեցություն ունի թուրքական գործոնը: Նոր ձևաչափով երկխոսության շնորհիվ մեր նախաձեռնությունների մասնակիցները հնարավորություն ստացան հասկանալ, թե ինչպիսի՛ն են այդ փոխազդեցությունները, նրանց անդրադարձը երկկողմանի խնդիրների վրա: Եկանք շատ հետաքրքիր եզրակացությունների, որ ոչ միշտ են թուրքական և ադրբեջանական կողմերը համաձայն իրար հետ և ոչ միշտ մենք գործ ունենք այդպես միաձուլված տանդեմի հետ: Պարզ էր, որ դա որևէ անմիջական պրակտիկ հետևանք չէր կարող ունենալ, բայց հետագա աշխատանքի համար բավականին օգտակար էր:

Մեր գործունեության հաջորդ փուլը 2005-2010 թթ. էին, որոնք բավականին բարդ տարիներ էին հայ-ադրբեջանական հարաբերությունների առումով, երբ այն մոդելները, որոնք մշակված էին Մինսկի խմբի համանախագահության կողմից, արժանանում էին շատ խիստ քննադատության և

բացառման քաղաքականության բուն տարածաշրջանում: Բնականաբար, այդպիսի մթնոլորտում մենք կարող էինք կենտրոնանալ զուտ ուսումնասիրությունների վրա և հենց այդ փուլում էր, որ մշակեցինք թշնամության լեզվի յուրահատուկ բառարան, պարբերաբար օգտագործվող կեղծ, ոչ արժանահավաստ տեղեկությունների, որոնք հաճախակիորեն անգիտակցաբար տարածում էին լրատվամիջոցները և լրագրողները: Այն մեր գործընկերների համար, ովքեր ցանկանում էին հետևել որակյալ ժուռնալիստիկայի սկզբունքներին, մշակվեցին նաև առաջարկություններ, թե ինչպես կարելի է լուսաբանել բարդ ու հակասական թեմաներ՝ խուսափելով իրար նկատմամբ հակակրանքի առաջացումից:

2010-2013թթ. շատ առանձնահատուկ էին, որովհետև մենք դիտարկում էինք հայ-ադրբեջանական հարաբերություններն եվրախնտեգրացման գործընթացների ներքո Արևելյան գործընկերության նախաձեռնության հետ կապված և փորձում էինք գտնել երկկողմանի հարաբերությունների զարգացման հնարավորություններ և կոնֆլիկտի հաղթահարման տարբերակներ հենց եվրախնտեգրացման գործընթացների ներքո բազմակողմանի համագործակցության

շրջանակներում: Այդ շրջանն էլ որևէ էական արդյունք չտվեց, բայց, համենայն դեպս, դա հետաքրքիր փորձ էր մեզ համար, որը կարող էր հետագայում նաև օգտակար լինել: Հիմա մեր կողմնորոշումները հետևյալն են: Կարելի է 2014 թվականից սկսած վերադառնալ եռակողմ հայ-ադրբեջանական-թուրքական ձևաչափին: Որքան էլ որ մարտահրավերներ կան, այն կարող է հետաքրքիր լինել օրակարգերի թարմացման առումով, քանի որ երկկողմանի հարաբերությունները երկու ուղղություններով էլ մի տեսակ փակուղի են մտել: Եթե որևէ ուղղությամբ հեռանկարները շոշափելի լինեին, երրորդ կողմի ներառումը խանգարող հանգամանք կարող էր հանդիսանալ, ինչպես օրինակ՝ «ֆուտբոլային» դիվանագիտության փուլում: Սակայն ակնհայտ փակուղային իրավիճակում հնարավորությունների պատուհաններ կարող են բացվել ամենաանսպասելի կողմերից: Հիմա այն մասին, թե ինչի՛ց պետք է խուսափենք: Նախ՝ պետք է շատ լավ հասկանանք, որ քաղաքացիական, «ժողովրդավարական դիվանագիտություն» հասկացությունը պետք է հնարավորինս քիչ օգտագործենք: Այդպիսի բան ներկա պայմաններում գոյություն չի կարող ունենալ հայ-ադրբեջանական հարաբերություններում և դարաբաղյան կոնֆլիկտի շուրջ: Պիտի

հասկանանք, որ ակնկալել վերջնական արդյունք որևէ նախաձեռնությունից միամտություն է, այսինքն՝ այստեղ գործընթացը կարող է շատ ավելի կարևոր է, քան վերջնական նպատակի պատրանքը: Որոշակի վերապահում ունեն գործընթացի մեջ նոր, փորձ չունեցող այլ երկրների և միջազգային կառույցների միջամտությունը, որովհետև ցանկացած նոր խաղացող այս երկխոսության շրջանակներում գալիս է նույն գաղափարներով, որոնք եղել ու սպառվել են տարիներ առաջ՝ առանց հաշվի առնելու, թե ի՛նչ է տեղի ունեցել դրանից հետո: Այդ խաղացողները երբեմն իրենց եռանդով հետաքրքրություն են առաջացնում և՛ դոնորների մոտ, և՛ այլ կառույցների մոտ, ու հանկարծ հայտնվում են առաջատար դիրքերում երկխոսության դաշտում՝ ինչ որ տեղ խանգարելով ավելի մտածված և ժամանակի առանձնահատկություններին համահունչ նախաձեռնություններին: Պիտի հասկանանք, որ տարբեր միջոցառումներում, տարբեր նախաձեռնություններում ներգրավվում են մարդիկ, ովքեր լրիվ հակառակ նպատակներ ունեն, քան խաղաղության և խնդրի հաղթահարման լուծումն է: Նրանց խնդիրն է առիթն օգտագործել միջոցառման վրա հարձակումների, տեղեկատվական պատերազմի հրահրման համար: Նրանց ուղղակի թեմա է

պետք և կոնկրետ հանդիպման, շփման առիթ, որպեսզի հերթական բացասական արձագանք լինի լրատվամիջոցներում, հանրային ընկալումներում: Պիտի հասկանանք նաև, որ շատերը մասնակցում են այդ կարգի նախաձեռնություններին, որպեսզի փորձարկեն իրենց հակահայկական կամ հակաարդրեջանական փաստարկները, հասկանան ռեակցիան և հետագայում կատարելագործեն ապակառուցողական բանավեճի «արվեստը»: Դա, իհարկե, չի օգնում գտնել ընդհանուր եզրեր և լուծումներ: Վերջապես՝ պետք է հասկանալ նաև այսօրվա իրավիճակն Ադրբեջանում, քանի որ նախաձեռնությունների համար հիմնական խոչընդոտը մեր այնտեղի գործընկերների կաշկանդվածությունն է: Մենք երբեմն չափազանցնում ենք այդ երկխոսության դերն այն հետապնդումների մեջ, որոնց ենթարկվում են քաղաքացիական հասարակության ինստիտուտներն Ադրբեջանում: Հիմնական պատճառը հայերի հետ շփումները չեն, որքան էլ որ ներկայացվի նույնիսկ կոնկրետ քրեական գործերով: Շատ դեպքերում հետապնդումները բացատրվում են հակաժողովրդավարական ընդհանուր միտումներով Թուրքիայում և Ադրբեջանում, իսկ «հայկական գործոնը» շեշտադրվում է հերթական զոհին առավել

անպաշտպան դարձնելու նպատակով: Հասարակությունը ձեռնպահ է մնում հետապնդումների այն գոհի նկատմամբ համակրանքից, որը մեղադրվում է, ասենք, Հայաստանի օգտին «լրտեսական գործունեության» համար: Այդպիսի իրավիճակում անձինք և կազմակերպությունները, որոնք զբաղվում են Ադրբեջանում մարդու իրավունքների, ժողովրդավարական ազատությունների պաշտպանությամբ կարող են և սահմանափակել հայ գործընկերների հետ իրենց առնչությունները՝ առավել խոցելի չդառնալու համար իրենց գործունեության հիմնական ոլորտներում: Պետք է այդ ամբողջը հասկանալ և այդ առումով նախկին փորձը բոլոր այն կազմակերպությունների, որոնք երկար ժամանակ աշխատել են համապատասխան ուղղությամբ, կարողացել են ձեռք բերել վստահելի գործընկերներ, ինչը ներկա իրավիճակում շատ արժեքավոր է: Դա երևի համար մեկ խնդիրն է, որովհետև եթե չունես վստահելի գործընկեր, որևէ նախաձեռնության ձևակերպումը և իրականացումն օգտակար չի կարող լինել այսօրվա լարված մթնոլորտում: Անհրաժեշտ է նաև առավելագույն թափանցիկություն. ցանկացած փակ գործընթաց, խորհրդապահական աշխատաձև, եթե կապված չեն պաշտոնական բանակցությունների հետ կամ նրանց զուգահեռ են

տեղի ունենում, վտանգավոր են և՛ դրանց
մասնակցող անձանց, և՛ բուն գործի համար:

**Մտքերի փոխանակություն
«Քաղաքացիական հասարակությունների դերը
հակամարտությունների խաղաղ կարգավորման
գործում» կլոր սեղանի վերջնամասում**



Կլոր սեղանին մասնակցելու և զեկուցումով հանդես գալու համար հրավիրվել էին այն հասարակական կազմակերպությունների ղեկավարները, որոնք անցած տարիների ընթացքում զգալի ջանքեր են գործադրել և ազդու փորձառություն են կուտակել ժողովրդական դիվանագիտության, մասնավորապես հայ-ադրբեջանական երկխոսության ոլորտում: Նրանց տեսակետներն ու կանխատեսումները կարող են շատ կարևոր լինել այս ասպարեզում քաղաքացիական հասարակության անելիքը պարզելու համար:

Ձեկուցումներին հաջորդած մտքերի փոխանակության փուլում կտր սեղանի մասնակիցներին առաջարկվեց վերլուծել ժողովրդական դիվանագիտության մասնակցությամբ հայ-ադրբեջանական երկխոսության ծավալման առկա հնարավորությունները և կանխատեսումներ անել, թե ո՞ր ուղղություններով կարող է այն առաջ մղվել: Այստեղ նկատի է ունեցվել այն հանգամանքը, որ Ադրբեջանի քաղաքական դեկավարությունը վերջին ամիսներին երկրի քաղաքացիական հասարակության կառույցների առջև կտրուկ արգելքներ է դրել Հայաստանի գործընկերներ կազմակերպությունների հետ համագործակցություն ծավալելու կապակցությամբ:

Այսպիսով, գործընթացի առաջ մղման հնարավորությունների հարցում երկու ճանապարհ է նշմարվում. կամ գտնել նոր թեմաներ և ռեսուրսներ շահագրգիռ միջազգային կազմակերպություններին խաղաղարար նոր համատեղ ծրագրեր առաջարկելու համար և, այնուամենայնիվ, փնտրել ուղիներ ադրբեջանցի գործընկերների հետ եղած համագործակցությունը շարունակելու կամ նոր համագործակցություն հաստատելու ուղղությամբ, որը մեկ ճանապարհ է; կամ գնալ երկու հասարակություններում միմյանցից անջատ, ինքնուրույն խաղաղասեր

առաքելությունն իրականացնելու ուղղությամբ՝ նկատի ունենալով, որ երկու երկրների ՀԿ-ներն աշխատելու են ինքնուրույն և իրենց աշխատանքի արդյունքները փոխանցելու են միջազգային դոնոր կառույցներին և նրանց միջոցով են ծանոթանալու հակամարտության մյուս կողմում գտնվող երկրի ՀԿ-ների գործունեության արդյունքներին:

Ստորև Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Կլոր սեղանի մասնակիցների դիտարկումներում պարունակվող գաղափարների վերլուծությունը:

Նախ և առաջ. Կլոր սեղանի մասնակիցները համակարծիք էին այն դիտարկմանը, որ մեր հասարակությունը լավ չի ճանաչում հարևան Ադրբեջանի հասարակությանը: Լոկ ադրբեջանական լրատվամիջոցների մատուցած տեղեկատվության վրա հիմնված մեր գիտելիքը մակերեսային է և քիչ է օգնում հասկանալու, ընկալելու այնտեղ ծավալվող գործընթացները: Հայկական քաղաքագիտական դիսկուրսում գերիշխում է երկու իրարամերժ մոտեցում: Ըստ առաջինի՝ Ադրբեջանի նախագահն այնքան ուժեղ է, որ չունի լուրջ ներքին ընդդիմություն և հիմնվելով իր ուժի պատկերացման վրա՝ առաջ է մղում բոլոր հնարավոր ուղղություններով Հայաստանի վրա ճնշում գործադրելու, մեր հասարակությանը մշտական լարման և վախի մեջ պահելու քաղաքականությունը: Ըստ այդ

պատկերացման՝ նա նախապատրաստվում է նոր պատերազմի, դրանից բխող քաղաքական և տեղեկատվական ապահովագրությամբ: Ըստ մյուս տեսակետի՝ Ադրբեջանի նախագահը թույլ է, ունի լուրջ վախեր իր ընդդիմությունից և այդ պատճառով էլ Հայաստանի ՀԿ-ների հետ համագործակցող ադրբեջանցի հասարակական գործիչներին դիտարկում է իբրև հինգերորդ շարայուն: Հենց դրա համար էլ նա լրտեսության մեջ է մեղադրում այդ հասարակական գործիչներին, բանտեր է գցում նրանց՝ այդպիսով փորձելով պահպանել իր քաղաքական իշխանությունը և վարվող քաղաքական գիծը:

Իրականությունը, սակայն, ըստ երևույթին, այս երկու մոտեցումների փոխլրացման համադրության միտում է, որովհետև, եթե հայկական ՀԿ-ների մեծ մասի ծրագրերն ընդհատվում են, ապա որոշ ծրագրեր (որոնք շատ չեն) դեռ շարունակվում են: Կլոր սեղանի մասնակիցները կարևորեցին Ադրբեջանի և այնտեղ ընթացող քաղաքական ու հասարակական գործընթացների առավել իմացությունը, ինչպես նաև այդ ասպարեզում մեր քաղաքագետների, գիտնականների և հասարակական դաշտի համատեղ ջանքերը:

Երկրորդ՝ բանավեճ ծավալվեց այն հարցում, թե արդյոք նպատակահարմար է ժողովրդական դիվանագիտությունը միայն Հայաստանի և

Աղբբեջանի գործընկեր կազմակերպությունների համատեղ ծրագրերով առաջ մղելը, թե՛ անպայման է այդ ծրագրերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմակերպությունների ընդգրկելը: Մասնակիցներից մեկի հաշվումներով վերջին տասնամյակում իրականացված ծրագրերի 80%-ը եղել է եկկողմ և միայն 20%-ն է ընդգրկել Արցախի մասնակիցներին: Ճշմարտությունն այն է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափով բանակցող կողմերը Հայաստանն ու Աղբբեջանն էին և պարբերաբար հանդիպում էին երկու երկրների նախագահներն ու արտաքին գործերի նախարարները: Սակայն, քաղաքացիական դիվանագիտությունն այն հարթակն է, որն առանց ԼՂՀ և նրա բնակչության համաձայնության որևէ քաղաքական համապարփակ լուծման հասնել ուղղակի չի կարող: Մասնակիցների կարծիքները կիսվեցին այն իմաստով, որ մի մասը նույնիսկ եկկողմ ձևաչափով երկխոսությունն ու համաձայնությունը աղբբեջանցի գործընկերների հետ օգտակար և կարևոր համարեց, իսկ մյուս մասը պնդում էր երկխոսությունը միայն եռակողմ (Հայաստան, Արցախ, Աղբբեջան) ձևաչափով առաջ մղելու անհրաժեշտությունը:

Երրորդ՝ Կլոր սեղանի մասնակիցները համաձայնվեցին, որ հիմա հայ- աղբբեջանական ժողովրդական դիվանագիտության նոր

նախաձեռնությունների համար վատ ժամանակ է: Երկու երկրների պաշտոնական դիվանագիտությունն էլ կարծես թե սպառել է հնարավոր զիջումների սահմանը և գրավել է անզիջում, կարծր դիրք: Այս պայմաններում էլ ավելի է սրվել իրադրությունը զինված ուժերի շփման գծում:

Կլոր սեղանն անցավ Փարիզում Ֆրանսիայի նախագահ Օլանդի միջնորդությամբ կայացած Հայստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումից երկու օր անց և, մասնակիցները, անշուշտ, Ելիսեյան պալատի պաշտոնական հաղորդագրության մեջ փնտրում էին տեղեկություններ և նույնիսկ ենթատեքստեր խաղաղ գործընթացի առաջմղման ուղղությամբ: Այն հանգամանքը, որ երկու նախագահները պայմանավորվել են հանդիպել միայն մեկ տարի անց, գալիս է հաստատելու հետևյալ միտքը, որ կարգավորման հեռանկարը մոտ չէ և առայժմ չի ուրվագծվում գործողությունների ծրագիր՝ ժողովրդական դիվանագիտության մասնակցությամբ երկու հասարակություններին խաղաղության պատրաստելու դժվարին գործում: Այստեղ հնչեց մի շատ կարևոր կանխատեսում՝ այն դեպքում երբ երկրորդ թրեքի (ժողովրդական դիվանագիտություն) հնարավորությունները խիստ սահմանափակ են և շփումներն Ադրբեջանի կողմից հիմնովին կամ մեծ մասամբ

արգելափակված են, խաղաղ գործընթացն առաջ մղող Մինսկի խմբի համանախագահները (Ռուսաստանը, Ֆրանսիան և ԱՄՆ-ն) կարող են նախագահել 1,5 թրեքի (իշխանություններին մոտ կանգնած քաղաքագետների և հասարակական շրջանակների) գործողություններ՝ դրանք համարելով այս իրավիճակում ավելի արդյունավետ և խոստումնալից: Ընդ որում, հենց նման մակարդակի շփումների հավանականությունը կարող է մեծանալ, նկատի ունենալով, որ համանախագահ երկրները (երևի համաձայնեցված) կարող են սեփական խաղաղարար նախաձեռնություններ դրսևորել, ինչի վառ օրինակ են հանդիսանում Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահների ջանքերը: Այստեղ մտահոգություն արտահայտվեց, որ եթե Լեոնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ կարգավորման գործը մնա միայն մեկ համանախագահ երկրին, ապա կողմնակալ կեցվածքի դրսևորումը դառնում է հավանական՝ նկատի ունենալով, որ կարող է տուրք տրվել Ադրբեջանի և նրա դաշնակից Թուրքիայի համատեղ ներուժին և նրանց դերին տարածաշրջանային և միջազգային գործերում: Այսպիսով, ավելի քան կարևոր է, որ խաղաղության փնտրտուքի գործընթացն առաջ գնա երեք համանախագահների, այսինքն՝ ժամանակակից աշխարհի երեք ուժային

կենտրոնների համատեղ և համաձայնեցված ջանքերով:

Չորրորդ՝ քննարկվեց նաև այն հարցը, թե որքանով է նպատակահարմար Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան եռակողմ ձևաչափով հասարակական կազմակերպությունների երկխոսությունն ու համագործակցությունը: Այստեղ նույնպես կարծիքները բաժանվեցին: Ըստ մասնակիցներից մեկի կարծիքի՝ այս եռակողմ համագործակցությունը հայկական մասնակիցների համար անհավասարություն է ստեղծում՝ հաշվի առնելով Ադրբեջանի և Թուրքիայի ջերմ հարաբերությունները: Համաձայն նրա արտահայտածի՝ այս երկխոսությունը ջուր է լցնում այդ երկրների պաշտոնական խոշոր դիրքորոշման ջրաղացին և լուրջ օրակարգեր է ստեղծում նրանց հատուկ ծառայությունների համար: Մրան չհամաձայնվեցին ուրիշները, որոնց կարծիքով նման եռակողմ ձևաչափով նախկինում անցած շփումները նույնպես օգտակար են եղել միմյանց դիրքորոշումներին ծանոթանալու և երկխոսության հեռանկարները գնահատելու տեսանկյունից:

Այս կապակցությամբ հետաքրքիր էր այն դիտարկումը, որ պատշաճ քաղաքական մոտեցում և քաղաքացիական դիրքորոշումներ ունեն ոչ միայն իշխանություններին մոտ

կանգնած ՀԿ-ները: Նման համագործակցության փորձ ունեցող և մյուս կայացած ՀԿ-ներն էլ են գիտակցում նման շփումներում իրենց պատասխանատվությունը:

Այստեղ կարևոր է նաև արձանագրել այն հանգամանքը, որ Հայաստանի քաղաքական իշխանություններն երբևէ չեն խոչընդոտել Ադրբեջանի կամ Թուրքիայի գործընկերների հետ մեր հասարակական դաշտի նախաձեռնություններին: Եղել են բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք ՀԿ-ների հետ համագործակցել են տարբեր ձևաչափերով՝ փորձելով օգտակար լինել: Եվ, ընդհակառակը, եղել են պաշտոնյաներ, որոնք հրաժարվել են համագործակցել՝ արտահայտելով այդ քաղաքացիական նախաձեռնությունների նկատմամբ իրենց ունեցած սկեպտիկ կամ բացասական վերաբերմունքը: Այսպիսով, տվյալ դեպքում, խնդիրն ավելի շատ անձնավորված է, քան քաղաքականացված: Կարևոր է նաև հայ և ադրբեջանցի գործընկերների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի թափանցիկության հարցը: Փորձը ցույց է տալիս, որ մեր ՁԼՄ-ների հետաքրքրությունը նման ծրագրերի նկատմամբ ավանդաբար շատ մեծ է եղել: Բայց նույնիսկ այս հանգամանքը, որ համատեղ ծրագիրը առավելագույնս թափանցիկ էր, իսկ մասնակիցները՝ տասնյակ ՁԼՄ-ներ, Ադրբեջանի

իշխանություններին չխանգարեց ճանաչված ադրբեջանցի հասարակական գործիչների մեղադրելու հայանպաստ լրտեսական գործողությունների մեջ և բանտարկելու նրանց: Այսուհանդերձ, լրատվական դաշտի համագործակցությունը ժողովրդական դիվանագիտություն իրականացնող ՀԿ-ների հետ մնում է շատ կարևոր և պահանջված:

Հինգերորդ՝ միջազգային տարբեր դրամաշնորհների շնորհիվ հայ և ադրբեջանցի համագործակցող ՀԿ-ների ներկայացուցիչներն անցած տարիների ընթացքում հնարավորություն են ունեցել ուսումնասիրելու աշխարհի տարբեր կողմերում այսօր առկա էթնոքաղաքական հակամարտությունները: Նրանք տեղերում ծանոթացել են այդ հակամարտությունների գոտիներում տիրող իրավիճակին, կարգավորման հարցում մոտեցումներին և հեռանկարներին, այնուհետև վերադարձել են Հայաստան և Ադրբեջան՝ հետաքրքրվող շրջանակներին ներկայացնելով իրենց հետազոտությունների արդյունքները: Եղել են նմանություններ, եղել են և էական տարբերություններ: Խնդիրն այստեղ այն է, որ այդ ծրագրերն եղել են շատ թանկ ու բարդ կազմակերպվող, և հետադարձ հայացք նետելով՝ կարելի է եզրակացնել, որ այդ գումարներով երկու երկրների շատ ավելի մեծ թվով ՀԿ-ներ կարող էին համագործակցել: Ինչևէ, աշխարհում առկա,

արդեն կարգավորված կամ դեռ կարգավորման փուլում գտնվող հակամարտությունների փորձի համատեղ ուսումնասիրությունը մնում է հետաքրքրության դաշտում:

Եվ վերջինը՝ կլոր սեղանի բոլոր մասնակիցները բարձր գնահատեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի այս նախաձեռնությունը՝ ի մի բերելու ժողովրդական դիվանագիտության ասպարեզում հարուստ փորձ կուտակած հասարակական կազմակերպությունների ղեկավարներին և լսելու նրանց: Մասնակիցներից մեկի դիպուկ գնահատմամբ հայ հավաքականության անունից ժողովրդական դիվանագիտության դաշտում խոսելու իրավունք ունի միայն Հայ Առաքելական Եկեղեցին և կասկածից վեր է, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Կովկասի մահմեդականների հոգևոր առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեի միջև երկխոսությունը բացառիկ ծանրակշիռ ներդրում է թշնամանքի և ասելության մթնոլորտը թուլացնելու, երկու հարևան ժողովուրդների միջև առկա հակամարտությանը խաղաղ լուծում տալու կարևոր գործում:

Մտքերի փոխանակության ավարտին կլոր սեղանը նախագահող Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը բոլոր մասնակիցներին շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելելու, շահեկան քննարկման և մտքերի փոխանակության համար: Նա մասնավորապես շեշտեց. «Մենք աշխատանք ունենք անելու, քանի դեռ մեր սահմաններում խաղաղությունը փխրուն է, քանի դեռ զինվորներ և խաղաղ բնակիչներ են զոհվում: Թող Աստված բոլորիդ ուժ, կարողություն տա՝ շարունակելու ձեր ազգաշահ և ազգանպաստ գործունեությունը՝ յուրաքանչյուրդ ձեր կարողությունների սահմաններում, ձեր սկզբունքների համաձայն, ձեր որդեգրած ձևաչափով»:

Արամ Սաֆարյան
Քաղաքական վերլուծաբան,
«Ինտեգրացիա և զարգացում»
հետազոտության և վերլուծության
հասարակական կազմակերպության նախագահ

Round Table Discussion on *The Role of Civil Society in Peaceful Settlement of Conflicts*

On October 29, 2014 a round table discussion on *The Role of Civil Society in Peaceful Settlement of Conflicts* was held at *the World Council of Churches (WCC) Armenia Inter-Church Charitable Round Table Foundation (ART)*.

The discussion opened with the welcoming remarks by the Head of the Inter-Church Relations Department of the Mother See of Holy Etchmiadzin Bishop Hovakim Manoukyan, Primate of the Diocese of Artik, and Doctor Karen Nazaryan, Executive Director of the ART.

The three discussion sessions were facilitated by Frater Vahram Melikyan, Director of the Information Services Department of the Mother See of Holy Etchmiadzin, Spokesman of His Holiness Karekin II, Mr. Khachik Galstyan, President of *The Armenian Conflict and Peace Research Association*, and Mr. Aram Safaryan, President of *Integration and Development* non-governmental organization.

Mr. Karen Bekaryan, President of the *European Integration* NGO, Mr. Boris Navasardyan, President of the Yerevan Press Club, Mr. Sergey Minasyan, Deputy Director of *The Caucasus Institute* Endowment, Mr. Ashot Melikyan, President of the Committee to Protect Freedom of Expression, Ms. Laura Baghdasaryan, Director of the *Region* Research Centre, and Mr. Stepan Grigoryan, Director of the Analytical Center for

Globalization and Regional Cooperation delivered their key-note addresses during the discussion.

The discussion concluded with an in-depth exchange of views. The round table discussion was summarized by the intervention of Bishop Hovakim Manoukyan, member of the ART Board of Trustees.

SOME REFLECTIONS ON THE PROSPECTS OF THE ARMENIAN-AZERBAIJANI DIALOGUE

*Ashot Melikyan,
President, Committee to Protect Freedom of Expression*



Throughout recent years we and the colleague of ours, Azerbaijani expert, have frequently been invited to Kyrgyzstan for the trainings of journalists from the Southern regions of that country. As it is well-known, bloody inter-ethnic strife had unfolded at very those regions some years ago, and these visits have been quite important to me both from the professional and personal perspectives. On the one hand, they provided me with an opportunity to study one more conflict and work with colleagues, who raise their own issues, which we discuss and try to find solutions for.

On the other hand, that is a good chance to rather openly discuss the resolution of the Karabakh issue, Armenian-Azerbaijani conflict with that very colleague of ours from Azerbaijan. Indeed, that is also important since in recent years the contacts became meager if not to say that bilateral contacts have almost been reduced to zero. It is not so easy to engage in a conversation Azerbaijani participants in the framework of international conferences: they are quite reserved and not

outspoken. There are very few people with whom we can talk on those issues, conduct a serious and substantiated discussion.

Hence, that work is very interesting also from the perspective of a one who studies conflicts and wants to somehow look into similarities and compare different conflicts. Such comparative studies demonstrate that attempts to compare are also lame. Every single conflict has a range of its peculiarities, and in this context I should also note that the differences are obvious. Our contacts with the Azerbaijani colleague confirmed my view that Armenia, Azerbaijan and Karabakh have never been so away from the settlement as they are today.

